

www.ter-hambardzum.do.am

ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՎԵԼՈ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԴԻԿՏՈՐ ԱՍՏՎԱԾԱՔԱՆՈՒԹՅԱՆ

ԾԻԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԻ
1992

1. ԳԻԾԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Գիշերային ժամերգությունը նախկինում ամենօրյա չէր, կատարվում էր կիրակին եւ մեծ տոները կանխող գիշերները միայն⁽⁶⁾: Ժ՞ դարից դարձավ ամենօրյա (Տե՛ս Հացունի, եջ 154կից):

Այսօր Գիշերային ժամերգությունը կտարարվում է առավոտյան, մինչ հոնում այն սկսվում էր կես գիշերին: Այդ սովորությունը պահպանվում է մինչեւ այսօր Երուսաղեմի Ս. Յարություն տաճարում:

© «Յայն գիշերի Ըստասարդի կամ Ա. Կարապետի տոնի նախօրյակին» գիշերապաշտօն մեջ եղել է բանակին ար կաթողիկոսին» և Փակադու Դ. մեջ:

Քարող կ բառը նշանակում է մոլունետիկ: Քարողները ընթերցում է սարկավագը: Քարողները, մի տեսակ, նախապատրաստում են հավատացյալներին աղոթքի. հիմնականում գրված են հորդորական ապահովություն: Քարողներին հաջորդում են աղոթքներո, իրեն մի կառուցվածք:

ԺԱԼՈՎԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Հայր մեր.և Աղոթք.և Ինչպես Եկեղեցական բոլոր արարողությունները, այնպես էլ ժամերգությունները սկսվում եւ ավարտվում են այս աղոթքով, որ կոչվում է նաեւ Տերունական աղօթք՝ Տիրոջ կողմից ավանդված լինելու պատճառով: "Հայր մեր" կը մեզ է հասել Երկու խմբագրություններով՝ Մատթեոս Զ Գևորգ եւ Ղուկաս մը 2և4: Եկեղեցական արարողությունների մեջ օգտագործվում է Մատթեոսին:

Հայ Եկեղեցու ծիսական արարողությունների ժամանակ և այս օրեադիունը է համարվելու:

Հայ Եկեղեցու ծիսական արարողությունների ժամանակ ընդունված է Տերունական աղոթքը սկսել «Օրինեալ Տեր մեր Յիսուս Քրիստոս. ամէն» նախարանով: Անձնական աղոթքի ժամանակ կարելի է օգտագործել նաեւ «Յանուն Յօր եւ Որդուոյ եւ Յոգևոյ Սրբոյ. ամէն» նախարանը, որ ավելի գործածական է Կաթողիկ Եկեղեցուն:

Տեղ, եթէ զշոթունս իմ բանաս.և է Սաղմոն Օ 17:

Stn. զի բարով և ըստոց և Բանվագած է 64 տներից. Կազմված ի երեւակ սպառություններից.

1. Տեր, զի՞ բազում ենեն, գլուխ է անկացած է ու
 2. Տեր Աստուած փրկութեան հմոյ, Ձե 1և20,
 3. Օրինեա՛ անձն հմ զՏեր, Եթ 1և22,
 4. Տեր, ուղի առօթից հմոյ, Եխը 1և14:

Յիշեսուք.և Երգ.և Գրել է Ս. Ներսես Շնորհալին Քոռմկլայի դղյակի գիշերային պահակների համար, որպեսզի նրանք հեռու մնան այլեւայլ «ռամկական» Երգեր Երգելուց: (Ղննտ. Սաղմոս ճԸԸ 55, ԽԴ 2):

Զարդուցեալքս.և Քարող.և Ըստ Հովհան Օձնեցու վկայության այս քարոզը գրել է Հովհաննես կաթողիկոս Մանդակումին© (478և490) (Օձնեցի 28): Սա մի կոչ է փառաբանելու մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսին եւ շնորհակալություն հայտնելու «ի գիշերային ժամուս յայսմիկ» այն հանգիստ քնի համար, «զոր շնորհեաց մեզ մարդասերն Աստուած ի միխթարութիւն եւ ի սփոփան տկարութեան մերում» եւ ինդրելու Տիրոջից «զմնացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել»: (Յմթ. Սաղմոն նժ՛՛ 62):

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

© Զեռ. Ս. Յ. թ. 2421, թվ. 1550, էջ 2ևում «Զարդուցեալք» քարոզից առաջ կա հետեւյալ Վերնագիրը. «Յովիաննու Մանդակունոյ կաթողիկոսի Յայոց, ի գաւառէն Աշամունեաց, ի գեղջէ Ծախմոտայ, արարեալ զարդարս յաղագո գիշերային պաշտընանց»:

Աշխարհի ամենայն, Առաւոտ լրտսոյ.և Երգեր.և Գրել է Ս. Ներսես Շնորհալին (Ե1173): Ժամակարգության կանոնը պահանջում է, որ քարոզին հաջորդի աղոթք: Այստեղ տեսնում ենք, որ «Զարթուցեալքս» քարոզի եւ «Զքէն գոհանամք» աղոթքի միջեւ գետեղված են «Աշխարհի ամենայն» եւ «Առաւոտ լրտսոյ» Երգերը, որոնք չկան ժամագրքի հնագույն ձեռագրերում: Այս ամենը ցույց են տալիս վերոհիշյալ Երգերի հետսամուտ լինելը: «Աշխարհի ամենայն»կը Երգվում է պահոց օրերին եւ սրբերի տոներին, իսկ «Առաւոտ լրտսոյ»կն Երգվում է

Կիրակիներին եւ տերունի տոներին:

Զքեն գրհանամբ և Ալոքը և Այս աղոթքը, որ «Զարդուցեալքս» քարոզի հետ կազմում է մի ամբողջություն, նույնպես գրել է Հովհաննես Մանդակունի կաթողիկոսը (Օձնեցի 28): Դետեւելով «Զարդուցեալքս» քարոզի կոչին, աղոթող գրհունակություն է հայտնում մեր Տեր Աստծուն, որ մեզ պարզեւեց հանգիստ խաղաղ քուն եւ աղաչում Նրան «զմնացուած գիշերիս խաղաղութեամբ անցուցանել»:

Իսաղաղութիւն ամենեցուն.և Մեծ աղոթքները կիսվում են ժամօրհնողի կողմից ասվող «Իսաղաղութիւն ամենեցուն» ողջույնով, որի հիմքում ընկած է առաքյալներին տրված Քրիստոսի ողջույնը Հարությունից հետո. «Իսաղաղութիւն ընդ ձեզ» (Ղուկաս Իշ 36), «Ողջոյն ընդ ձեզ» (Ղուկ. ի 20):

Ամեն.և Յուրաքանչյուր աղոթք պարտվում է «ամեն» և ուժ, որը նշանակում է Թող լինել:

Կանոնագույքը և Յնում «Ձերն գրհանամք» աղոթքից հետո քաղվում էր սաղմոս. «Աստ ասի սաղմոս ըստ ձայնին» (Խորատ Ժամագործի): Սաղմոս քաղելը՝ (փոխսնիփոխ) ընթերցելը՝ ինչ հրեական աղոթքի ձեւերից է, որ որդեգրվել է նաեւ Քրիստոնեական Եկեղեցու կողմից: Ամբողջ Սաղմոսաց գիրը բաժանված էր ութ կանոնի, որոնցից յուրաքանչյուրին կցված էր մի մարդարեական օրինուրյուն: Յուրաքանչյուր կանոնի վերջին՝ յոթերորդ գուրղան կոչվում էր կանոնագլուխ: Ըստ Օձնեցու, կանոնագլուխը կարդացվում էր բարձրածայն: Օձնեցին Սաղմոսի ընթերցումը նմանեցնում է Խորայելացիների՝ Երիքովի շուրջը յոր անգամ դառնալուն, երբ վերջին՝ յոթերորդ շրջանին հնչեցրեցին փողերը եւ բարձրածայն աղաղակեցին (Օձնեցի, էջ 110):

Ժամագրքի մեջ զետեղված Կանոնագլուխները հանդիսանում են յոթերորդ գուբդաների առաջին վեց եր վերջին 6և12 տարերո, ոստ հետեւալին.

Աշխարհագույն մասնակի, լաւ հայ

St'n ስታዊሮች እና 61:13:

Ճկու զարգ ապվաստ... ԾԲ Ի՞ն,
Չի ոչ օրոր նորալի իրեւնունի. Շ

Հայոց գոյրի անցա վիլամասակ... Ծ-Դ 2002:4.
Բ2 | կ թեզ Տեղ լուսաբան 3 1|6

Էջ. 1. քազ, Յզի, յիւնացայ... Ի հաՅ,
Եղիսաբետի նոյն ՅԱ 11:19:

Եղիշեան պահանջման... կը լիւր. Եվս: Չորրորդին որ Տեր ՅՈՒ

ԲՎՀԱ ԶՈՂԻՌԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԻ, ՏԵՐԻ... ՁԵ ԻԱՅ,

Դարձուցեր զօգնութիւն ի սրոյ նորա... ԶԸ 44և53:

ԳԶ.և Խոստովան Եղերուք Տեառն... ճԵ 1և6,
Մատնեաց զնոսա... ճԵ 41և48:
ԳԿ.և Արարի իրաւունս... ճԺԸ 121և126,
Սերծեսցին խնդրուածք իմ... ճԺԸ 169և176:
ՂԶ.և Օրինեա, անձն իմ, զՏէր... ճԽԵ 2և7,
Գովեա Երուսաղէմ զՏէր... ճԽԵ 12և20:
ՂԿ.և Սիրեցից զբեզ Տէր... ժԵ 2և7,
Զգեցուցեր ինձ զօրութիւն... ժԵ 40և51:

Կան նաեւ երկու այլ հատուկ կանոնագլուխներ.

1.և Բուն Բարեկենդանի եւ Նոր Կիրակիի, բաղկացած 3 սաղմոսներից.

Օրինեա անձն իմ զՏէր... ճԽԵ 2և10,
Օրինեցեր զՏէր, զի բարի է... ճԽԶ 1և11,
Գովեա Երուսաղէմ զՏէր... ճԽԵ 12և20:

2.և Ավագ Ուրբարի.

Իշխանք հալածեցին զիս... ճԺԸ 161և168,

Սերծեսցին խնդրուածք իմ... ճԺԸ 169և176:

ԿԱՐԳ ՀՍԿՄԱՆ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹՈՒ ԳԻՇԵՐԻՆ

Ավագ Ուրբարի կանոնագլխից հետո ժամագրքում գետեղված է Ավագ Ուրբարին նախորդող գիշերվա հսկման կարգը, որն անշուշտ, Գիշերային ժամերգության ամենօրյա կարգին մաս չի կազմում:

Ավագ Ուրբարի գիշերային հսկման կարգը բաղկացած է ավետարանական վեց ընթերցումներից, որոնց նախորդում են սաղմոսներ եւ Ս. Ներսէս Շնորհալու հեղինակած «յաղագս Մեծի Ուրբարու Աւետարանացն» 36 տարից բաղկացած «Այսօր անձառ» երգից նևական տուն, ըստ հետեւյալնի.

Ա.և Առաջին սաղմոս.Բ. և Ընդէ՞ր խոռովեցան հեթանոսք...

Երգ.և Այսօր Անձառ...

Ավետարան.և Յովիաննես ժԳ 16 և ԺԸ 1:

Բ.և Երկրորդ սաղմոս.Գ. և Երանի որ խորհի...

Երգ.և Ելից զօրէնսն...

Ավետարան.և Ղուկաս ԻԲ 1և65:

Գ.և Երրորդ սաղմոս.ԾԸ. և Փրկեա զիս...

Երգ.և Խնամնով սիրոյն...

Ավետարան.և Մարկոս ժԴ 27և72:

Ղ.և Չորրորդ սաղմոս.ՅԸ. և Աստուած մտին հեթանոսք...

Երգ.և Ճառագայթ փառաց էին...

Ավետարան.և Մատթեոս ԻԶ 31և56:

Ե.և Յինգերորդ սաղմոս.ճԸ. և Աստուած օրինութեան...

Երգ.և Չար կապանաց...

Ավետարան.և Մատթեոս ԻԶ 57և75:

Զ.և Վեցերորդ սաղմոս.ճԺ. և Խոստովան Եղերուք...

Երգ.և Տարածեալ...

Ավետարան.և Յովիաննես ԺԸ 2և27:

Ապա՝

Մաղթանք.և Յոգլոցն հանգուցելոց...

Աղոթք.և Թրիստոս Որդի Աստուծոյ...

Կանոնագլուխ.և Իշխանք հալածեցին զիս:

Յստակ է, որ Ավագ Ուրբաթի գիշերային հսկման կարգը կատարվել է Կանոնագլուխից առաջ:

ԿԱՐԳ ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ (ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹԻ)

Ավագ Ուրբաթի գիշերային հսկման կարգից հետո ժամագրքում գետեղված են դարձյալ Ս. Ներսես Շնորհալու հեղինակած չորս երգեր՝ «Մեծի ուրբաթու ցերեկին», իրենց ավետարաններով, ըստ հետեւյալնի:

Երգ.և ԲԿ. ԴԿ. և Նորոգող տիեզերաց...

Ավետարան.և Մատրեսու հե 1և56:

Երգ.և ԲԶ. ԴԶ. և Ետուն ըմպել...

Ավետարան.և Մարկոս ժԵ 1և41:

Երգ.և ԱԿ. ԳԿ. և Բարբառելով...

Ավետարան.և Ղուկաս ԻԲ 66 և ԻԳ 49:

Երգ.և ԱԶ. ԳԶ. Աղբերացն...

Ավետարան.և Հովհաննես ԺԹ 17և37:

Այս կարգն ամբողջությամբ վերցված է Ավագ Ուրբաթի «ի վեցերորդ ժամուն» կատարվող Խաչելության կարգից:

Այս կարգն արդեն անառարկելիորեն ցույց է տալիս, որ ժամագրքում Գիշերային ժամերգության մեջ հետագայում կատարվել են, հաճախ անհարկի, հավելումներ, որոնք մաս չեն կազմել, ոչ էլ այսօր կարող են մաս կազմել գիշերային ժամերգությանը: Այս իրողությունը թելադրում է մեզ, որ ամիրաժեշտ է, պատմականական սիրական քննությունից հետո, վերակազմել Հայ Եկեղեցու Գիշերային ժամերգության կանոնը:

ԿԱՐԳ ՀԱՆԳԱՏՅԱՆ

Ս. Պատարագ մատուցելու օրերին կատարվում է Հանգստյան կարգ, ըստ հետեւյալնի.

ա. Շարական հանգստյան,

բ. Սաղմոս

ԱԶ.և Տէր, մի՛ սրտմտութեամբ... Զ 1և10,

Տերունի օրերին՝ Տէր, ո՞վ կացցէ... ԺԴ 1և6:

ԱԿ.և Բարձր առնեմ զքեզ, Տէր... ԻԹ 1և12:

ԲԶ.և Աստուած յանուան քում... ԾԳ 1և7:

ԲԿ.և Աստուած, ողորմեա՛ մեզ... ԿԶ 1և7:

ԳԶ.և Յաճեցար, Տէր, ընդ երկիր քո... ԶԴ 1և12:

ԳԿ.և Տէր, լուր աղօթից իմոց... ճԱ 1և12:

ԴԶ.և Մերձեսցին խնդրուածք իմ... ճՃ 169և176:

ԴԿ.և Տէր, լուր աղօթից իմոց... ճԽԲ 1և14,

Տերունի օրերին՝ ի խորոց կարդացի... ճԻԹ 1և6:

գ. Ավետարան հանգստյան

ԲԿ,ԴԿ.և Մատրեսու ժԳ 36և43:

ԲԶ,ԴԶ.և Մարկոս Դ 26և34:

ԱԿ,ԳԿ.և Ղուկաս ԺԲ 32և40:

ԱԶ,ԳԶ.և Հովհաննես Ե 19և23:

դ. «Աստուած անեղ» երգից մի փոխ. «Երգ Տեառն Ներսեսի ասեցեալ վասն առ ի Թրիստոս Անջեցելոց»:

Ե. Մաղթանք՝ Հոգուցն.հանգուցելոց,
Քարոզ՝ Եւ եւս խաղաղութեան,
Աղոթք՝ Թրիստոս Որդի Աստուծոյ,
Հայր մեր,
Մաղթանք՝ Թրիստոս Աստուած մեր...:

- ԽԱԶԻ ՏՈՍԵՐԻ ԵՎ ՄԵԾ ՊԱՐՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐԻ ԿԱՐԳ
- Խաչի տոներին եւ Մեծ Պահքի կիրակիներին Յանձնույան կարգի փոխարեն (Երբ դարձյալ Ս. Պատարագ է մատուցվելու) կատարվում է հետեւյալ կարգը.
- ա. Շարական «Այսօր ամճառ»,
բ. Սաղմոս կցորդ. «Նշանեցաւ», փոխ. «Ի կարդալ ինում»
գ. Ավետարան խաչելության,
դ. «Նորոգող» երգից մի փոխ:

ՏԱճԱՐԻ ԱՎԵՏԱՐԱՆ

Յարության կիրակիներին եւ այլ Տերունական տոներին ընթերցվում է Տաճարի ավետարան. այսպես են կոչվում Ավետարանի այն հատվածները, որտես Յիսուս խոսում է գալիք փորձությունների եւ տառապանքների մասին:

- Օրինութիւն.և Շարական.և Այս շարականները կոչվում են Օրինություն, որովհետեւ սկսվածք ունեն Մովսես մարգարեի հետեւյալ օրինությունը. «Օրինեցուք զՏէր, զի փառօր է փառաւորեալ» (Ելք ժե 1): Օրինության շարականներում պատմվում է տվյալ օրվա իմաստը կամ տոնի բովանդակությունը:
- Օրինությունները բաժանվում են մի քանի տեսակների.
- ա. Ապաշխարության օրինություններ.
- Կոչվում են նաև Պահոց օրինություններ, որովհետեւ երգվում են պահոց օրերին: Գրել է Ս. Մեսրոպ Մաշտոցը:
- բ. Ավագ օրինություններ.
- Նվիրված են Քրիստոսի Յարության հիշատակին եւ կոչվում են «Աւագ Օրինութիւնք Յարութեան»: Երգվում են «յաւուրս Յինանց եւ ամենայն Կիրակէից»: Ավագ օրինությունները ութն են, որոնցից 7նը (ԱԶԿՂՋ) գրել է Ստեփանոս Սյունեցին:
- գ. Մարտիրոսաց օրինություններ.
- դ. Յանձնույան օրինություններ.
- ե. Տերունական տոներին նվիրված օրինություններ եւ այլն:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.և Մաղթանք, քարոզ, աղոթք, մաղթանք:

Հեղինակը համարվում է Ս. Սահակ Պարթեւը:

Մաղթանքները փոքրիկ աղոթքներ են, որ արտասանվում են ժամօրինող հոգեւորականի կողմից իբրեւ մուստք, երբեմն էլ իբրեւ եգորակակում:

Այսուեւ մաղթանքները բազմաթիվ են, ըստ օրվա խորհրդի, բաժանված երեք մեծ խմբերի՝ Տերունի, Սրբոց եւ Պահոց:

Վերոհիշյալ մաղթանքներին հաջորդում են նույն կառուցվածքն ունեցող քարոզկաղոթքների չորս խումբ, ըստ հետեւյալնի.

ԲԿ.ԴԿ.և Քարոզ՝ Վասն ի վերուստ...

Աղոթք՝ Տէր տուընջեան...
Մաղթանք Սաղմոսիւք եւ օրհնութեամբ...:
ԱԶ.ԳԶ.և Քարոզ՝ Վասն ի գիշերի...
Աղոթք՝ ի գիշերի եւ ի տուընջեան...
Մաղթանք՝ ի գիշերի եւ ի տուընջեան...:
ԱԿ.ԳԿ.և Քարոզ՝ Վասն ուղղելոյ...
Աղոթք՝ Տէր երկնի եւ երկրի...
Մաղթանք՝ Յերգս օրհնութեան...:
ԲԶ.ՂԶ.և Քարոզ՝ Վասն գտանելոյ...
Աղոթք՝ Գոհանան զըէն...
Մաղթանք՝ Գոհութեանք եւ ճշմարիտ...:
Քարոզևաղոթքամաղթանքի այս չորս խմբերը, անկասկած, հնագույն ժամանակներից մաս են կազմել Գիշերային ժամերգությանը: Սրանց հաջորդում է Տերունական աղոթքը՝ կարծես հայտարարելով ժամերգության ավարտը. «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն: Յայր մեր...»:

Յայր մեր:

Թագաւորք եւ Ալէլուք.և Երգ.և Գիշերային ժամերգության ավարտին, կարելի է ասել նաեւ Գիշերային ժամերգությունն ավարտելուց հետո երգվում է փառաբանական երգ: Պահոց օրերին եւ սրբոց տոներին երգվում է «Թագաւորք», իսկ Տերունի տոներին՝ «Ալէլուք»:

«Թագաւորք»-կամերը «Թագաւոր յալիտեան» սկսվածքով փառաբանական երգեր են, իիմնականում քաղված սաղմոսներից: Սրբոց տոների «Թագաւորք»-կամերը, որ կոչվում են «Թագաւորք մարտիրոսաց», ուրեն են՝ ԱԶՆԿ, յուրաքանչյուրը բաղկացած 3 տնից, իսկ պահոց օրերի «Թագաւորք»-կամերը, որ կոչվում են «Թագաւորք ապաշխարութեան», հինգն են՝ երկուշաբթից ուրբաթ օրերի համար, յուրաքանչյուրը բաղկացած 9 տնից:

«Թագաւորք»-կամերի շարբում առանձնահատուկ տեղ է գրավում Ս. Ստեփանոս նախավկային նվիրվածը, որ ծանոթ է «Այսօր Դասը» անունով: Յնուն այն երգվում է միայն Ս. Ստեփանոսի տոնին: Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի (1763-1780) կարգադրությամբ այն երգվում է նաեւ տարեվերջի երեք Ավագ տոներին, Ս. Գրիգոր Լուսավորչի երեք եւ Ս. Թաղեռնակարդութիմեռոս առաքյալների երկու տոներին: Այժմ երգվում է նաեւ Ս. Յովհաննես Մկրտչի եւ Վարդանանց տոներին: «Այսօր Դասը»-ը երգվում է հանդիսավոր կերպով, ատյանում, հանդիսադիր հոգեւորականի խնկարկումով:

«Ալէլուք գիշերայինք տէրունական տօնից» երգերը նույնպես փառաբանական են, քաղված սաղմոսներից: «Ալէլուք»-կամերը բաղկացած են երկու տնից եւ բոլորի համար ընդհանուր «Փառք եւ երկրագութիւն Յօր եւ Որդույ եւ Յոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յալիտեան յալիտենից. ամէն: Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա» վերջաբանով: Այս երգերը կոչվում են «Ալէլուք», քանի որ յուրաքանչյուր տուն սկսվում է երեք անգամ կրկնվող «ալէլուիա» նախադրությամբ: «Ալէլուիա»-կամ երրայական բառ է, որ նշանակում է «Փառք Տիրոջը»:

2. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Առավոտյան ժամերգությունը Եկեղեցու հնագույն ծիսական ամենօրյա արարողություններից է: Նվիրված է Որդի Աստուծոն փառաբանությանը: Յնուց ի վեր կատարվում է արշալույսին: Այն խորհրդանշում է Քրիստոսի Երեւալը Յուղաբեր կամանց, ամփոփելով Քրիստոսի հարության եւ փրկագործության խորհրդները:

ԺԱՄԱՍԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ.

Հայր մեր:

Սաղմոն՝ Եցաք առաւտու ողորմութեամբ (Զթ 14և17):

Սկսվածք՝ Օրինութիւն Երից մանկանցն. Օրինեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց... (Դամիել գ 26և45, 52և86): Սա հանդիսանում է սկսվածք Հարց շարականների համար:

Մաղթանք՝ Օրինեցէք, ամենայն արարածք...

Շարական Հարց

Շարականների այս ժամրը իր անունը ստացել է սկսվածքից՝ «Օրինեալ ես Տէր Աստուած հարցն մերոց...»: Հարց շարականների ծագումը հիմնված է Դամիել մարգարեի գրքում նկարագրված՝ երեք պատանիների՝ կրակից փրկվելու պատմության վրա, որը քրիստոնի կողմից մեղավոր մարդկության գեհենի դատապարտումից ազատագրման նախատիպն է համարվում: Կարծվում է, որ Հարց շարականները մեր Եկեղեցու հնագույն շարականներն են: Գրեթե յուրաքանչյուր տոն եւ օր ունի իր Հարցելը, որոնց ընդհանուր գումարը 190 է: Հարց շարականները բաղկացած են երկու մասից՝ յուրաքանչյուր մասը Յևական տնից:

Քարոզ՝ Եկեալքս...

Մաղթանք՝

Կիւրակից եւ այլոց տէրունական տօնից. Հզօր, յաղորդ...

Մարտիրոսաց. Ցողեա՛, Տէր...

Պահոց. Ցողեա՛, Տէր...

Սկսվածք՝ Մեծացուցէ անձն իմ գՏէր...

Երգ Մարիամու Աստուածածնին: Արնված է Դուկասի Ավետարանից՝ Ա 47և55:

Շարական Մեծացուցէ.

Մեծացուցէ կոչվող շարականները նվիրված են Ս. Աստվածածնին: Յնում այդ շարականները երգվել են միայն կիրակի օրերին եւ տէրունական տոններին (Տես, Օձնեցի, էջ 29): Այդ սովորությունը պահպանվել էր նաև Ս. Ներսէս Շնորհալու օրերին: Նա Ավեքս դուքսին գրած թղթում այս մասին ասում է. «Զերգս սրբոյ Աստուածածնին գրեալ էր ի թրթի աստ, ոչ ասել յեկեղեցիս մեր. եւ այս ամբաստանութիւն ամենեւին աննասն է ի ծշնարտութենն զի այնքան պատուի ի մէնջ արժանաւորն պատույ յերկնաւորաց եւ յերկրաւորաց նայրն Աստուծոյ Մարիամ, մինչ զի գրանս նորա ոչ ի լոկ աւուրսն ընդ Երից մանկանցն եւ ընդ մարգարեին Դաւթայ Երգեմք բանից, այլ ի կիւրակէս միայն եւ ի տօնս տէրունականս» (Ընդհանրական, էջ 95և96):

Մեծացուցեների ամենօրյա Երգեցողության կարգադրությունը վերագրվում է Գրիգոր Է Անավարդեցուն (1293և1307), որն էլ գրել է մեծ թվով Մեծացուցէ շարականներ:

Մեծացուցէ շարականին հաջորդող քարոզը եւ աղոթքը նույնաես նվիրված են Աստվածածնին եւ համարվում են Անավարդեցու գրչի արդյունք:

Քարոզկիւրակից՝ Եւ եւս..., Վասն սուրբ տեղւոյս...

Մաղթանք՝ Դու ես թագաւոր յաւիտեանս...:

Այս քարոզը եւ աղոթքը ասվում են կիրակի օրերը միայն: Գտնվելով Յուղաբերից կարգից անմիջապես առաջ, կարծվել է, թե սրանք մաս են կազմում Յուղաբերից կարգին (Օրմանեան, Ծիսագիտութիւն Հայաստանեայց Սուլը Եկեղեցւոյ, Երուսաղէմ 1977, էջ 41): Խաժակ վրդ. Պարսամյանը ցույց է տվել, որ դրանք «Կը պատկանին կիրակնօրեայ Առաւոտեան ժամին... Իւղաբերից կարգի մաս չեն կազմեր» (էջ 84):

ԿԱՐԳ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Կատարվում է միայն կիրակի օրերին, ի հիշատակ մեր Տիրոց՝ Յարությունից հետո յուղաբեր կանաց երեալում: Ճնում Յուղաբերից կարգը Առավոտյան ժամերգությունից անկախ մի արարողություն է եղել, որ կատարվել է միայն կիրակի օրերին, Երուսաղեմում: Այս արարողության նկարագրությունը պահպանել է խապանացի մայրապետ Եթերիան (շուրջ 381և384 թթ.): «Յոթերորդ օրը՝ Տերունական օրը... Առաջին հավախոսին եպիսկոպոսը գնում է Յանրության տաճարի մեջ գտնվող քարայրը: Դոները բացվում են եւ ողջ ժողովուրդը մտնում է կանթեղներով լուսավորված Յարության տաճարը: Քահանաներից մեկը սկսում է սաղմոս ասել, մյուսները պատասխանում են, որից հետո արտասանվում է մի աղոթք: Ապա սարկավագներից մեկը մի այլ սաղմոս է սկսում, ապա նորից մի աղոթք: Յետո Եկեղեցականներից մեկը սկսում է մի երրորդ սաղմոս, ապա մի երրորդ աղոթք, որին հաջորդում է հավաքական հիշատակություն: Այս երեք սաղմոսներից ու աղոթքներից հետո նրանք բուրվառներով խնկարկում են Յարության տաճարի միջի քարայրը, այնպես որ ամբողջ տաճարը խունկի բույրով է լցվում: Ապա եպիսկոպոսը վերցնում է պվտարանը եւ դեպի դուռը գնալով կարդում Տիրոց Յարության նկարագրությունը: Ընթերցման սկզբում ժողովուրդը սկսում է լալ ու ողբալ այն տառապանքի համար, որ կրեց մեր Տերը» (էջ 124և125):

Երուսաղեմում ճնունդ առաջ այս արարողությունը տարածվեց Արեւելք եւ Արեւմուտք: Դ դարի վերջին Անտիոքում խմբագրված օրենքների մի ժողովածուում, որ ծանոթ է "Առաքելական սահմանադրություն" Վերնագրով, հիշատակություն կա Յուղաբերից կարգի կատարման մասին. "Տիրոց հարության օրը, որ Տերունական օր է... հոտընկայս երիցս աղոթում ենք ի հիշատակ Նրա, որ երեք օր հետո հարություն առավ" (էջ 173): Եթերիայի ուղեգրության եւ Առաքելական Սահմանադրության վերոհիշյալ հատվածների քննությունը ցույց է տալիս, որ Յուղաբերից կարգը մաս է կազմել Յամայնքային պաշտամունքին, եւ ոչ թե Կանական պաշտամունքին:

Արեւելյան Եկեղեցիներից միայն Յայ եւ Բյուզանդական Եկեղեցիները պահեցին այս արարողության սկզբնական նկարագիրը:

Յայ իրականության մեջ Յուղաբերից կարգի առաջին հիշատակությունը պահպանվել է Յովիան Օձնեցու (է 728) կանոններուն եւ «Յաղագ կարգաց Եկեղեցւոյ» գրության մեջ: Ըստ Օձնեցու վկայությանց, Յուղաբերից կարգը կատարվում էր կիրակի առավոտյան, հետեւյալ կառուցվածքով.

ա. Երեք սաղմոսներ՝ ԽԳ 26, ԾԳ 4, ԽԽԵ 10,

բ. Խնկարկություն,

գ. Յարության Ավետարանի ընթարցում:

Երկրորդ վկայությունը պահպանված է Ստեփանոս Սյունեցու (է 735) "Մեկնութիւն Ժամակարգութեան" աշխատության մեջ: Վերոհիշյալ կետերի վրա այստեղ ավելանում է.

դ. Քարոզ:

Յուղաբերից կարգին անդրադարձող հաջորդ հայ մատենագիրը Խոսրով Անձեւացին է (ժ դար), որը վերոհիշյալ չորս կետերի վրա ավելացնում է.

ե. Մաղթանք:

Այսօր Յուղաբերից կարգը ունի հետեւյալ պատկերը. ©:

Սաղմոն Երգ Իւղաբերից Աւետարանին.
Վիառաբանություն,

Եղիցի անուն Տեառն...ճըթ 2, 1, 2, 3, Եւ

Արի, Տէր, օգնեա՛ մեզ...ԽԳ 27, 24

Թագաւորեսցէ Տէր... ճկւէ 10, 1և2ա:

Ավետարան Հարության.

tng

Զենի իւղաբերից Աւետարանին. Փառք յարութեան ըոյ.

Կզողոր «Փառք լառութեան» երգի

Կողման կողման կամ այլ պահանջման դեպքում՝

Քաղաքացի կույտերությունը բասմայա պետքանի
Քաղաքացի կույտերությունը Ավելասությունը է եղանակը. Ցույցարարեալը...

Առողջ Ամենակեռութ:

© Յուլյաբերից կարգի մասին տե՛ս, Խաժակ Վրդ. Պարսամյան, «Կարգ Իւղաբերից Հայաստանեաց Եկեղեցւոյ», ԵԶՄԻԱԾԻՆ 1989, ԲԿԳ, էջ 78և85, Յ. Վարդան Հացունի, «Պատմութիւն Հայոց Աղօքանատոյցին», Վենետիկս. Ղազար 1965, էջ 370և374:

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

Սկսվածք՝ Ողորմեա՝ ինձ, Աստուած...

Արնված է Սահմանագ գրից Ծ 1և20: Նանդիսանում է մուտք Ողորմեա շարականների համար:

Շարական Ողորմեա'

Ողորմեա շարականների հիմնական թեման ապաշխարությունն է: Կարծվում է, որ առաջին Ողորմեա շարականները գործ են Ա. Մեսրոպ Մաշտոցը:

Ողորմեա շարականներին կապված են.

Քարող զկնի Ողորմեային. Երկրպագեմք քեզ,

Մարթանը.

Տեղունական տօնից. Ողողմած, գթած...

Պահումը կատարվել է գործադրության մեջ՝ պահպանային գործադրության մեջ՝ պահպանային գործադրության մեջ՝

Տարիք. Դեկտեմբերի 10 գիշերը
Տօնից սուրոց. Բարեխօսութեամբ....

Ակավածք՝ Օրինեցէք զՏէր յԵրկնից...

Այս սկզբանքը նույնպես անված է Սաղմոսաց գորից, կազմված է 3 փոքրիկ սաղմոսներից՝ ճեղը 1և14, ճիշթ 1և9, ճջ 1և6: Յանդիսանուն է մուտք Տէր լեռների շրականների համար:

Շառական Տէր լեռկնից:

Φωτρή βαρηδούινα.

Այս օրիներգությունը սկսվում է >Քրիստոսի Ծննդյան ժամանակ հրեշտակների փառաբանությամբ. «Փառք ի բարձուն Աստուծոյ»...» (Ղուկաս): Ավետարանական այս սկսվածքը ճոխացել եւ ամբողջապես տարածվել է աշխարհում (Տե՛ս՝ Գրիգոր Տաթևիանի, Գիրո Յաղոմանց, թ. 635ա):

Օրինակ այսպիսի բառը կազմված է ուղղվածութեա (օս կրիկու աշխատաց, ուղիք լայգանաց, էջ օչաա). Օրինակ այսպիսի բառը կազմված է երկու մասից: Արեւմտյան Եկեղեցին ունի միայն առաջին մասը, որ եռավուն է ապահոված ունարություն:

Ըստ Խոսրով Աբգելացու, Երկրորդ մասը, որ սկսվում է. «Եւ յամենայն ժամ օրինենք զքեզ..» նախադասությամբ, գրվել է Գ Տիեզերական ժողովում (Եփեսոս 431թ.):

Առաջին մասը, որ երգվում է ձեռնամած, Յայր Աստօնու ուղղված փառաբանություն է, իսկ երկրորդ մասը ուղղված է Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ բազմած Յոր աջ կողմք՝ ջնջում է աշխարհի մեղքերը:

Օրիներգությանը հաջորդում են իրեն հատուկ մաղթանքը եւ կցորդ ըստ պատշաճի:

მართვა კულტურული და სპორტული ცენტრების მიზანისთვის განვითარებული აქტორი იყენებს მართვის სამსახურის მიერ მიღებულ მუშაობას.

Յշխիսիմեանց, Արաքելոց եւ մարգարիկց. Աստուած մեծ... Յեղինակը համարվում է Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Հայրապետաց եւ վարդապետաց. Առաջնորդ...

Մարտիրոսաց եւ ճգնաւորաց. Զճգնութիւն սրբոց...

Սպասութեան Աստվածածնայ տօնից եւ Ծննդեան Քրիստոսի եւ Տեառնոնդառաջին. Մայր սուրբ...

Պահոց. Փառաւորեսպուր զամենակալին Աստուած...

Աղոթք՝ Գոհանամք զգեն... Արավիտյան լուսի հետ խնդրվում է Տիրոջը նաև Ս. Յոգու երկնային լույսը բաշխել հավատացյալներին՝ աստվածային պատվիրանները կատարելու համար:

Սուրբ Աստուած կամ Երեքսրբեան օրիներգություն.

Երեքրյան օրիներգությունը բազմաթիվ վիճաբանությունների տեղիք է տվել Հայ եւ Կաթոլիկ, հատկապես Հայ եւ Բյուզանդական Եկեղեցիների միջեւ: Դույն եւ Կաթոլիկ Եկեղեցեցիներումում երեքրյանը ուղղված է Ս. Երրորդությանը եւ երգվում է հետեւյալ կերպ: «Սուրբ Աստված, Սուրբ Հզոր, Սուրբ Անմահ՝ ողորմյա մեզ» (ք Զակրվ շը ճրղով, քակրվ ռկվչւսով, քակրվ ոջոջոջմով, որիհրենվը շն ծջվ): Հայ Եկեղեցին «Ս. Աստուած» երգի մեջ ավելացնում է «Որ խաչեցար» բարերը: Օրթոդոքս եւ Կաթոլիկ Եկեղեցիները չեն ընդունում այս հավելումը, պատճառաբանելով, թե Աստված չի կարող խաչվել: Զանականալով խճկվել դավանաբանական վիճաբանությունների մեջ, նշենք միայն, որ եթ «Ս. Աստուած»ը վերաբերում է Ս. Երրորդությանը, ապա ճիշտ չէ անշուշտ «որ խաչեցար»կը ասելը: Սակայն ըստ Հայ Եկեղեցու, այս երգը ուղղված է Որդի Աստծուն, հետեւաբար եւ «որ խաչեցար»կը միանգամայն տեղին է (Տե՛ս. Օձնեցի, Մատենագործութիւն, էջ 89և90, Ստեփանոս Սյունեցի, "Արարատ", 1915, էջ 491, Ծնորհալի, Ընդհանրական, էջ 138և139, Տաթևացի, Գիոր Յաղոմանց, էջ 631և632):

Կոստանդին Ա կարողիկոսի օրով Սուլը գումարված ազգայիննեկեղեցական ժողովը հրահանգում է «Ա. Աստուած» կին նախորդող Երկու աղոթքները Եղբափակել ի դեմս Քրիստոսի. «Զայն Երկու աղօթքն, յորոյ վերայ Սուլը Աստուած ասենք, զփառքն ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուլը Հոգի մի՛ աւարտէք, զի մի՛ յերրորդութեանն վերայ բուեսցի խաչն. զկատարած լուր ձայնիցն ասել պիտի Զոր միշտ ի բարձունս առաքեսցուք ամենազօր տէրութեանդ, այժմ եւ միշտ: Զգոհանամքին վերջըն՝ Լիցուք տաճար եւ բնակարան աստուածային շնորհացդ, եւ գոհութեամբ փառաւորեսցուք զքեզ ընդ Հօր... եւ այլն» (Կիրակոս, Վենետիկ, 1865, էջ 172և173, հմնտ. Հայոց Եկեղեցական իրաւունքը, Ա. գիրք, Ն.Վ.Մելիք թանգեան, Շուշի, 1903, էջ 460և461): Այս կանոնով Բարձրաբերդիցին ցանկացել է կամինել օտարների այն մեղադրանքը, թե հայերը Ս. Աստվածը երգում են ի դեմս Ս. Երրորդության: Այս որոշումը կիրավել է Ժամագորի մեջ (Յննտ. Զահկեցի, Դրահստ Ցանկալի, էջ 253ը):

Երեսորյան օրիներգությունը Կայ Եկեղեցում օգտագործվում էր արդեն Դվինի և ժողովի տարիներին (Օձնեցի, Մատենագրութիւն, էջ 28):

Ըստ ավանդության, Երեքսրբյանը առաջին անգամ երգել է Հովսեփ Արենաթացին Քրիստոսի խաչափայտից հջեցնելու ժամանակ. «...չէր հնար իջուցանել զնարմինն տեսան ի խաչն վասն փայլատակնանցն ի խոցուածոյն: Ապա ի բացեայ կացեալ (Հովսեփ Արենաթացին և Ե. Վրդ. Պ.) եւ զձեռս համբարձեալ ասէ. Սիւրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ ամմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ: Եւ զայս երից ասացեալ՝ էջ մարմինն սուրբ ի վերայ բազկացն Յովսեփայ»: (Ստեփանոս Եպս. Սիւնեաց, Գիրք Թղթոց, էջ 331, Տես նաեւ էջ 466և468, Գրիգոր Տաթեւացի, Գիրք Յարցմանց, էջ):

Ինչպես նշեցինք արդեն, Յայ Եկեղեցին երեսորյան օրիներգությունը երգում է ի դեմ Որդի Աստուծոն: Տաօրինական հիշատակությունը փոփոխվում է ըստ տոնի: Ավագ Ուրբաթ ճաշին, սրբոց տոներին, խաչի եւ Եկեղեցու տոներին եւ պահոց օրերին երգվում է «որ խաչեցար վասն մեր»: Այլ առիթներով «որ խաչեզար վասն մեր»կի փոխարեն երգվում է:

Աւետեազ, Ծննդեան եւ Ութօնից, որ յայտնեզար վասն մեր:

Քենամաց, Յարխան և Խըզելից. որ յայնացալ կամ այս քարախնօտեալ օալսպետանն ըոհիսորուսի. ոռ եկին եւ օալու ես:

Աւագ Ուրբաթու մատնութեան գիշերին, որ մատնեզադ վասն մէռ:

Աւագ Ուղբարու համակարգակիցները ուղարկել են Հայաստանի վարչապետին:

Հայութի մէջ ասսածյա Յալուքը բաս կրթութեալոց. որի յանուանի և առ Յայութի տղամածութիւն անմի օրինադրութիւն որ հայութի բանակը առ Յայութ:

Վայրությանը ուղարկեալ է Թարգո Եկիմի:

Վերապահության և Աստվածաշնչին ոռ Եկիր ի իրենումն ըօթ ըու Ե

કાન્પિયાવાળાં ચ. કાન્પિયાઓનાં. નિરી અધ્યાત્મિક વિજ્ઞાન

© | 1 ապրիլի աստվածության մի ամպ ամսագիր է կ եղաւ Արքական Ոռոգ Ապր

Ըստ Ամերիկական պատմագիրքը ար այլ բան չէ ԲԱ (բԲ) սուսը և բանի արարեցնա (Աթ-)

©© և Տարբերակությունը պահպանվում է Հայաստանի Հանրապետությունում, Արդի այս աշխատավայրում:

սուրբ հարքն. Եւ որ քան զայս աւելի ասեն որպես տնօրինեցար, կամ ընծայեցար կամ քո տէրութեամբ, կամ որ Եկիր ի Բեթանիա, կամ ի Վերնատունն, սոքա աւելորդ Եւ խորթք Են, ի տգիտաց ասացեալ» (Գիրք Հայոցմանց, էջ 634թ):

卷之三

«Ս. Աստուած» կին հաջորդում է «Փառաւորեալ» կցորդը, ուղղված Ս. Աստվածածնի, որի հեղինակ է համարվում Թովման առաքյալը: Ըստ ավանդության նա այդ երգել է Աստվածածնի թաղման առթիվ:

Մաղթանք՝ Փրկել զմեզ...

Քարող՝ Եւ եւս... Վասն լսելի...

Օրինություն՝ Օրինութիւն եւ փառք...:

ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐԻՆ (Պահng եւ սրբng)

Սկսվածք՝ Օրինեցէք, մանկունք, զՏէր... (Սաղմոս ճՃԲ 1և9):

Մանկունք շարականի սկսվածքն է:

Մանկունք շարական

Այս շարականները վերագրվում են Պետրոս Գետաղյառի կաթողիկոսին (1019կ1054):

բայց չունենալու վարափուկը...
Քաղոց՝ Կան Խառապութեան...

Digitized by srujanika@gmail.com

Միլիոնարդներ

Սաղմոն՝ Սիրեցի զի լուիցէ... Այս փոխը կազմված է 5 սաղմոսներից կատարված քաղվածքներից, ըստ հետեւյալնի.

Սիրեցի զի լուիցէ Տէր... ճժԴ 1և6,
Հաւատացի զոր եւ խօսեցայ... ճժԵ 1և8,
Օրինեցէր զՏէր ամենայն ազհնք... ճժԶ 1և2,
Աստուած յանուան քում կեցն զիս... ԾԳ 1և7,
Տուր զօրութիւն ծառայի քո... ԶԵ 15և16:

Երգ՝ Արարչական, գրել է Ս. Ներսես Շնորհալին: Նվիրված է արարչության վեց օրերին եւ պատմում է երկուշաբթի օրվանից մինչեւ շաբաթ օրը Տիրոջ արարչագործության ընթացքը: Ակրոստիկոս է, բաղկացած 36 տներից՝ Հայոց այբուբենի համաձայն: Վեցական տուն երգվում է շաբաթվա վեց օրերին:

Մաղթանք՝ Քրիստոս Աստուած մեր....:

Քարոզ՝ Սուրբ ճգնաւորաց....:

Աղոթք՝ ի տօնի առաքելոց, եւ մարգարեից, եւ հայրապետաց, եւ վարդապետաց. Որ ընտրեցեր եւ ընկալար....

Ի տօնի մարտիրոսաց, ճգնաւորաց եւ կուսանաց. Պսակիչ սրբոց, Քրիստոս....:

Պահոց օրերին Սաղմոն՝ Բանից իմոց... Այս փոխը նույնպես կազմված է 5 սաղմոսներից կատարված քաղվածքներից, ըստ հետեւյալնի.

Բանից իմոց ունկն դիր, Տէր... Ե 1և12,
Լցաք առաւօտու ողորմութեամբ քով... ԶԹ 14և17,
Ի խորոց կարդացի առ քեզ... ՃԽԹ 1և6,
Լսելի արա ինձ... ՃԽԲ 8և14,
Աստուած յանուան քում կեցն զիս... ԾԳ 1և7:
Երգ՝ Արարչական:
Մաղթանք պահոց՝ Խաչ քո եղիցի մեզ ապաւեն...
Քարոզ՝ Աղաչեսցուք զամենակալն Աստուած...
Աղոթք պահոց՝ Օգնեա՛ մեզ, Տէր, օգնեա՛ մեզ....:

Մեծ Պահքին (յաւուր աղուհացից)

Տէր ամենակալ. Այս աղոթքը բաղկացած է երկու մասից: Առաջին մասի (18 տուն) հեղինակ համարվում է Հուդայի Մանասէ թագավորը (695և641) եւ իշշվում է Մնացորդաց Բ գրքում՝ ԼԳ 18և19: Ս. Գրքի պարականն զրվածքներից է (Տես, Վենետիկյան Աստվածաշունչը, 1860թ.): Երկրորդ մասը, որ սկսվում է «Փառք Յօր»կից (10 տուն) հաստատապես քրիստոնեական ծագում ունի:

Քարոզ՝ Եկեալքս...

Աղոթք՝ Տէր Աստուած փրկութեան մերոյ....:

Սաղմոն՝ Բանից իմոց...

Երգ՝ Արարչական:

Մաղթանք պահոց՝ Խաչ քո եղիցի մեզ ապաւեն...

Քարոզ՝ Աղաչեսցուք զամենակալն Աստուած...

Աղոթք պահոց՝ Օգնեա՛ մեզ, Տէր, օգնեա՛ մեզ....:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Քարոզ՝ Յիշեա, Տէր.և Այս քարոզը ժամագրքում համարվում է «Ի Սարկաւագ վարդապետէն ասացեալ»: Հովհաննես Սարկավագը (ԺԲ դար), սակայն, չի կարող լինել հեղինակը, քանի որ այն ծանոթ է Հովհան Օձնեցուն (Սատենագրութիւն, էջ 114):

Աղոթք՝ Բարերար եւ բազումողորմ Աստուած.

Հայր մեր:

Կիրակի օրերին (ԵՎ ԱՅԼ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՈՆԵՐԻՆ)

Սաղմոս՝ Եղիշի անուն Տեառն օրինեալ...

Ավետարան՝ Բժշկութեան.

Տերունական տոներին Սաղմոսը, Գիրքը եւ Ավետարանը ըստ Տոնացույցի:

Երգ՝ Նորաստեղծեալ Հեղինակը Ս. Ներսէս Շնորհալին է:

Քարոզ՝ Խնդրեսցուք հաւատով...

Աղոթք՝ Քում ամենազոր....

Հայր մեր:

Ա Ն Դ Ա Ս Ա Ն

Մեծ տոներին, Առավոտյան ժամերգությունից հետո կատարվում է Անդաստանի կարգ, որը հանդիսավոր մի արարողություն է աշխարհի չորս ծագերի օրինությամբ.

Օրինեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի արեւելեան կողմն աշխարհիս, եւ Հայրապետութիւն Հայոց.

Օրինեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի արեւմտեան կողմն աշխարհիս, եւ թագաւորութիւնը քրիստոնեոցից.

Օրինեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի հարաւային կողմն աշխարհիս, Երկիրս, անդաստանս եւ պտղաբերութիւն տարրոյս.

Օրինեսցի եւ պահպանեսցի եւ նախախնամեալ պահեսցի հիւսիսային կողմն աշխարհիս, վաճքս, անապատս, քաղաքս եւ գիւղս եւ բնակեալ ժողովուրդս ի նոսա.:

Անդաստանի կարգը Հայ Եկեղեցու ծիսակարգ է մտել Կիլիկյան շրջանում (հավանաբար Կաթոլիկ Եկեղեցու ազդեցությամբ): Նախկինուն կատարվել է Եկեղեցուց դուրս:

3. ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Արեւագալի ժամերգությունը կատարվում է արեւածագին՝ "Արեւագալի ժամին", "ի դէմս Հոգւոյն Աստուծոյ": Տնօրինական խորհուրդն է Քրիստոսի Հարությունը եւ Երեւումը աշակերտներին:

Սկզբնական շրջանուն Արեւագալի ժամերգությունը նաև է կազմել առավոտյան ժամերգությանը, ինչպես կարելի է Եզրակացնել Ս. Հովհանն Օձնեցու (Ե728) հետեւյալ հանձնարարականից. "իդ. Իսկ կիւակէին աւուր առաւօտինքն՝ այսգունի խորհրդով յօրինեալ բերէ զկարգն իւր: Զկնի Հարցինն՝ Սեծացուցէ ասել... զկնի Փառք ի բարձանցն... եւ զկնի ամենեցուն զԱրեւագալին նուագել սաղմոս, զոր Եղիշի անուն տեառն ասել սկսեալ են ի ժամանակացն Եզրի կարողիկոսի" (կանոն իդ, էջ 40և42): Այս վկայությունից կարելի է Եզրակացնել նաեւ, որ Եզր կարողիկոսի (Ե641) օրվանից կիրակի օրերին, առավոտյան ժամերգության վերջում սովորություն է դարձել "նուագել" "Եղիշի անուն տեառն" սաղմոսը՝ Արեւագալի սաղմոս կոչումով: Արեւագալի ժամերգության առաջին հիշատակությունը կատարում է Ստեփանոս Սյունեցին (Ե735), նշելով որ մարդ "ահիւ սքափեալ աղօթէ ի ժամուս յայսմիկ" (Ա 493): Խոսրով Անձեւացին (Ժ դար) արդեն գրեց Արեւագալի ժամերգության մեկնությունը: Յ. Վ. Հացունին, կատարելով բանասիրական փնտրութներ, կազմել է Արեւագալի ժամերգության սկզբնական հետեւյալ կարգը (Ը դար).

Սաղմ.և Եղիշի անուն Տեառն

Կանոն.և Իբրեւ զի

Օրին.և ի գիշերաց
Քարոզ.և Յարեւելից
Աղօթք.և Յարեւելից
Սաղմ.և Աստուած, Աստուած իմ
Սաղմ.և Տէր հովուեսցէ

Օրինութիւն ժողովրդեամ: (Պատմութիւն Յայոց աղօթամատոյցին, էջ 218):

Արեւագալի ժամերգությունը ճոխացվել է 12-րդ դարում, Ս. Ներսէս Շնորհալու գրած Երգերով:

Կարծվում է, որ այդ Երգերով Շնորհալին նպատակ է ունեցել նաեւ սիրաշահել Յայ Եկեղեցու գիրկը Վերադառնալու պատրաստ արեւորդիներին՝ արեւի պաշտամունքը շեշտող հայ աղանդավորներին:

Ըստ Մաղաքիա արք Օրմանյանի, այսօրվա Արեւագալի ժամերգությունը կարելի է բաժանել չորս մասի.

Յայր մեր,
ա. Սաղմ. Եղիցի անուն Տեառն (ՂԱ 18և20),
Երգ արեւագալին. Յարեւելից մինչ ի մուտս,
Յորդորակ. Յարեւելից յարեւմուտս,
Քարոզ. Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու,
Աղօթք. Յարեւելից մինչեւ ի մուտս արեւու,
Աստուած մշտնշենաւոր:
բ. Սաղմ. Աղաղակեցէք (ՂԹ 1և6),
Երգ. ճգնաւորը Աստուծոյ,
Յորդորակ. ճգնաւորը ճշմարիտք,
Մաղթանք. Աղաշենք,
Քարոզ. Սուրբ ճգնաւորօքն,
Աղօթք. Սուրբ ես, Տէր, եւ ի սուրբս հանգուցեալ,
Յիշեա՛, Տէր, զպաշտոնեայս քո,
Բարերար եւ բազումողորն Աստուած:
գ. Սաղմ. Աստուած, Աստուած իմ (ԿԲ 1և11),
Լուր, Աստուած, աղօթից իմոց (ԿԳ 1և11),
Երգ. Լոյս, արարիչ լուսոյ,
Յորդորակ. Անեղանելիի Աստուած,
Մաղթանք. Լուսովդ քո, Քրիստոս,
Քարոզ. Փառաւորեսցուք զամենակալն Աստուած,
Աղօթք. Զառաւօտու աղօթս:
դ. Սաղմ. Տէր հովուեսցէ զիս (ԻԲ 1և8),
Ցոյց ինձ ճանապարհ (ՃԽԲ 8և12),
Աստուած մեր ապաւէն (ԽԵ 1և11),
Աստուած՝ յօգնել ինձ նայեաց (ԿԹ 1և6),
Տուր զօրութիւն ծառայի քո (ԾԵ 16և17),
Երգ. ճանապարհ եւ ճշմարտութիւն,
Յորդորակ. ճանապարհ բարի Քրիստոս,
Մաղթանք. Տէր, ուղղեա զգնացս մեր
Քարոզ. Աղաշեսցուք զամենակալն Աստուած,
Աղօթք. Առաջնորդ կենաց եւ պարգեւիչ
Աղօթք (Աւուրց պահոց, յորս տօն ոչ լինի). Օրինեալ ես:
Յայր մեր:

Այսօր Հայաստանում այս ժամերգությունը կատարվում է Մեծ պահոց շրջանին. չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին հանդիսավոր, մյուս օրերին՝ պարզ: Ամերիկայում, Հունաստանում եւ այլուր այն կատարվում է Սեծ Պահքի կիրակի օրերին, պատարագից հետո, կամ պատարագի փոխարեն:

Ժամերգության հմաստը լույսի փառաբանումն է, իսկ խորհուրդը՝ մեր հոգիների լուսավորումը: Ծագող արեգակի հետ միատեղ մեր հոգին ունի տենչը եւ ծարավը իմանալի արեգակի, տենչը եւ ծարավը նրա լույսով լուսավորվելու եւ անսայքաք քայլելու ծշմարիտ ճանապարհով, հասնելու համար հավիտենական կյանքի երջանիկ հանգրվանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Զավեն Ծ. Վ. Արզումանյան, Արեւագալի ժամերգությունը, "ԵԶՄԻԱԾԻՆ" 1984, էջ 42և43:

4. ԵՐՐՈՐԴ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Այս ժամերգությունը հնում կատարվում էր ամեն օր, առավոտյան ժամը 9կի մոտ:

Ինչպես այս, այնպես էլ հաջորդող Վեցերորդ ժամի եւ Իններորդ ժամի ժամերգությունները ապաշխարության հասուկ իմաստներով լի արարողություններ են, որոնց հիմնական գաղափարը անփոփած է "Ողորմեա ինձ Աստուած" սաղմոսի մեջ: Հաճախ այս երեք ժամերգությունները կոչվում են "Երեք ողորմեա" և ներ (ժամագիրը, Նոր Զուղայ 1642, էջ 32):

Այս երեք ժամերգությունները ե դարում արդեն գործածության մեջ են եղել, ճոխացվել են 12ևրդ դարում, Ս. Ներսես Շնորհալու երգերով:

Երրորդ ժամի ժամերգությունը ուղղված է "ի դեմս իջման Հոգույն Սրբոյ եւ ի դեմս նախամօրն ճաշակման, եւ ազատութեանն Քրիստոսի": այսինքն՝ տնօրինական խորհուրդն է նախամօր ճաշակումը արգելյալ պտղից եւ Քրիստոսով ազատումը դատապարտումից:

Ս. Հովհան Օձնեցին Երրորդ ժամին ժամերգություն կարգելու հիմք է համարում Մարկոս Ավետարանչի այն վկայությունը, թե Քրիստոս Երրորդ ժամին է խաչ հանվել(ժե 25). "Երրորդ ժամու աղօթից խորհուրդը ի վեր է քան մեր կարողութիւնս, եւ միայն նոցա յայտնի է, որոց Սուրբ Հոգույն շնորհը յայտնեն զծածկեալ զխորհուրդն: Բայց ինձ այսպէս թուի, եթէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի կրիցն եւ ի ներգործութեանցն կարգեալ, զոր կատարեաց յայսն ժամու ի կենարար չարչարանս իւր, յասել երանելոյն Մարկոսի եթէ «էր ժամ Երրորդ, եւ հանին զնա ի խաչ»" (Օձնեցի, Մատ. էջ 96, հմմտ. Ստ. Սյունեցի, "Արարատ", 1915, էջ 494): Ըստ Օձնեցու Քրիստոս խաչ է բարձրացել այդ ժամին "քանզի յայնմ ժամու գերեալ լինի նախաստեղծն ի բանսարկուեն տրփական կերակրօքն ի ծառոյն նահարեր եւ ի չար խորհուրդն"

(Անդ):

Ստորեւ ներկայացնում ենք Երրորդ ժամի ժամերգության արարողության կարգը.

Հայր մեր,

Սաղմոս. Ողորմեա ինձ Աստուած (Ծ 2և21),

Երգ. Օրինեմք զբեզ,

Սաղբանք. Յամենայն ժամու,

Քարոզ Մեծի Պահոցն ի Յովիաննու Մանդակունույ ասացեալ. Միաբան ամենեքեան գոհացարուք, Աղոքք. Որ ի քրովբեական,

Որ էիր յառաջ քան զյալիտեանս,

Սաղմոս. Տէր Աստուած օրինեալ,

Քարոզ. Խնդրեսցուք հաւատով,

Աղոթք. Առաջնորդեա՛ մեզ,
Յիշեա՛, Տէր, զպաշտօնեայս քո,
Բարերար եւ բազումողորմ Աստուած,
Սաղմոն. Տէր հովուեսցէ զիս (ԻԲ 2և6),
Ցոյց ինձ ճանապարհ (ԵԽԲ 8և12)
Քարոզ. Գոհաբանելով աղաչեսցուք,
Աղոթք. Խաղաղութեամբ քով, Հոգիդ սուրբ,
Յայր մեր:

5. ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Յնում այս ժամերգությունը նույնպես կատարվում էր ամեն օր, մեր ժամով ուղիղ կեսօրին: Ուղղված "ի դեմս Յօր Աստուծոյ եւ ի դեմս չարչարանաց եւ խաչելութեան Որդույն Աստուծոյ": տնօրինական խորհուրդը Քրիստոսի չարչարանաց եւ խաչելության հիշատակն է:

Ս. Յովիան Օձնեցին այս ժամերգության խորհուրդը բացատրում է հետեւյալ բառերով. "Իսկ Վեցերորդ ժամուն կարգեալ աղօթքն, որով յայտնի է ի նմին ժամու անցանել ընդ սահման պատուիրանացն, եւ ճաշակել ի պատրանաց պտղոյն, եւ ի նմին ժամու փոխանակ նորա քաղցր ճաշակմանն մեղացն, ճաշակեաց Քրիստոս զքացախն ընդ դեմի խառնեալ, ի բժշկութիւն պտղոյն դառնութեամ" (Անդ, էջ 94և95):

Ստորեւ ներկայացնում ենք Վեցերորդ ժամի ժամերգության արարողության կարգը.

Յայր մեր,
Սաղմոն. Ողորմեա ինձ Աստուած (Ծ 2և21),
Երգ. Խաւարեցաւ լոյսն արեւուն,
Սաղբանք. Յամենայն ժամու,
Քարոզ Մեծի Պահոցն. Արթուն մտօր,
Աղոթք. Զգեցն մեզ,
Երկնային խաղաղութեամբ քով,
Սաղմոն. Տէր մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս,
Քարոզ. Վասն հիւանդաց,
Աղոթք. Փարատեա զցաւս,
Յիշեա՛, Տէր, զպաշտօնեայս քո,
Բարերար եւ բազումողորմ Աստուած,
Սաղմոն. Երանի որ խորին զաղբատն (Խ 2և5),
Որ բնակեալն է յօգնութիւն (Ղ 1և16)
Քարոզ. Խնդրեսցուք հաւատով,
Աղոթք. Յայր զքութեանց,
Յայր մեր:

6. ԻՆՍԵՐՈՐԴ ԺԱՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Յնում այս ժամերգությունը կատարվում էր ամեն օր, մեր ժամով ժամը 3ևին:

Ուղղված "ի դեմս Որդույն Աստուծոյ, Այլ եւ ի դեմս մահուանն եւ բանական հոգւոյն աւանդմանն": տնօրինական խորհուրդը Քրիստոսի մահվան, նրա հոգու ավանդման հիշատակն է:

Ահա թե ինչպես է մեկնում Ս. Յովիան Օձնեցին այս ժամերգության խորհուրդը. "Իսկ յիններորդ ժամուն կարգեալ զաղօթսն, այս վասն անդարձ խոստոսանութեան մեղանացն Աղամայ, յորում ժամու դա-

տապարտեալ ելաւ ի դրախտէն, եւ ի նմին ժամու աղաղակաւ աւանդեաց զոգին փրկիչն աշխարհաց, եւ զԱղամ եհան ի դժոխց" (Անդ, էջ 95):

Ստորեւ ներկայացնում ենք Իններորդ ժամի ժամերգության արարողության կարգը:

Հայր մեր,

Սաղմոս. Ողորմեա ինձ Աստուած (Ծ 2և21),

Երգ. Չարչապակցեալ քեզ տիւ լուսոյ,

Սաղբանք. Յանձնայն ժամու,

Քարոզ Մեծի Պահոցն. Սուրբ սրտիւ,

Աղոք. Տէր զօրութեանց,

Բազումողորմ Աստուած,

Սաղմոս. Տէր մի՛ մատներ զմեզ իսպառ,

Երգ. Տեառն Ներսեսի. Նահապետին Աքրահամու,

Աղոք. Ամկեալ առաջի քո,

Յիշեա՛, Տէր, զպաշտոնեայս քո,

Բարերար եւ բազումողորմ Աստուած,

Սաղմոս. Սիրեցի զի լուիցէ Տէր (ճժ՛ 1և9),

Յաւատացի զոր եւ խօսեցայ (ճժ՛ 10և19)

Օրինեցէք զՏէր, ամենայն ազինք (ճժ՛ 1և2),

Շարականք Յանձնատեան Տէրունեաց եւ Մարտիրոսաց ըստ ութ ձայնից,

Սաղբանք. Հոգուցելոց,

Քարոզ. Կասն հանգուցեալ հոգուցն,

Աղոք. Թրիստոս Որդի Աստությու,

Հայր մեր:

ճաշու երեք ժամերգությունները այսօր կատարվում են միասին,

Հայաստանում Մեծ Պահոց օրերին,

Սփյուռքի որոշ գաղութերում կիրակի օրերին, ս. պատարագից առաջ:

Թեեւ վաճքերում եւ անապատներում վերոհիշյալ երեք ժամերգությունները միշտ կատարվել են առանձինառանձին, քաղաքային եկեղեցիներում հաճախ պաշտվել են միասին: Ս. Ներսես Շնորհալին իր "Ժամատեղեաց Խրատ" նում թելադրում է. "Իսկ թէ գերեք ողորմեան միում ժամանակի ոչ ասես, այլ յերիս ժամանակս ասես, ըստ անապատաւոր սուրբ հարցն, որ ի Մաքենիս եւ ի Թեղենիս էին, այսինքն, յերրորդ ժամն, ի Վեցերորդ ժամն, ի յիններորդ ժամն, այսպէս է արարողութիւնն" (Ժամագիրք, Նոր Զուղայ 1642, էջ 32):

7. ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր եւ ներկա առօրյայի ժամերգություն է: Կատարվում է մայրամուտից առաջ, Իններորդ ժամու ժամերգությունից հետո երկարող ժամանակամիջոցին, երեկոյի ժամուն, ըստ ժամագրքի բացատրության: Ուղղված ի դեմս Որդվոյն Աստուծոն: Տնօրինական հիշատակն է Թրիստոսի խաչից հջեցվելը եւ պատաճքով գերեզման դրվելը, ուրիշ խոսքով բաղումը:

Այս ժամերգության մեջ տիրապետող գլխավոր գաղափարը եւ նրան հետեւող կենտրոնական զգացումը, մարդու աշխատանքի տակ ճնշված եւ օրվա ալեկոծություններից խռովված հոգու խաղաղության կարուտն է, որի արտահայտությունը գտնում ենք "Աղաչեսցուք զամենակալն Աստուած" քարոզում:

Գիշերվա սեմին հավատացյալը խաղաղության կարուտով լցված խնդրում է Աստծուց, որ հասնող գիշերը լինի իր համար հանդարտություն եւ ոչ միայն իրեն գիշեր ժամուն, այլ բոլոր մարդկության եւ

կյանքի բոլոր ժամերին անբողջ աշխարհում: Բայց այդ խաղաղությունը հնքնին չի ծնվի: Եվ բխում է քրիստոնեական բարոյականից, այսինքն՝ քրիստոնյա կյանքի ակունքից, հավատքի, հույսի եւ սիրո աղբյուրից: Այս գաղափարը տիրապետում է նույն այդ քարոզի հաջորդ աղոթքի "Լուր ձայնից մերոց" կի տողերում: Այս հարուստ բովանդակության եւ մանավանդ սրբանչելի կարգավորության պատճառով երեկոյան ժամերգությունը իր մեջ ունի պարզ եւ հակիրճ, գրավիչ եւ առինքնող մի զորություն, որին ենթարկվում է գիտակից յուրաքանչյուր հավատացյալ:

6. Խաղաղական ժամերգություն

Նախավերջին ժամերգությունն է խաղաղականը. ուղղված ի դեմս Յոզեֆում Աստուծո: Կատարվում է մայրամուտից հետո՝ քննելուց առաջ: Ժամագրբում իբրև տնօրինական խորհուրդ արձանագրվել է Քրիստոսի թաղումը. "Իջումն ի ժմիխս" եւ ազատագրումը հոգիների եւ խաղաղեցումը նրանց տառապանքների:

Արարողության գլխավոր նասերն են՝ երկար սաղմոսներ, աղոթքներ եւ հոգեւոր երգեր: Այս բոլորի խորում իբրև զգացական եւ իմացական աշխարհ գիշերային անորոշ վտանգների եւ փորձության առաջ գտնվող ամենօրյա մեղքերով ծանրաբեռնված մարդու հոգեվիճակը, որը ձգտում է խաղաղություն եւ անդրբություն: Ապա գիշերային արհավիշքների "սատանայական ու դիվական խռովությանց", "ընդդիմանարտ եւ աներեւույթ գազան" կի դիմաց Աստուծո հովանավորության, հրեշտակների պահպանության տենչը, որը արթնացնում է մարդու մեջ հետեւյալ սրբանչելի մտածումը, մարմին առաջ սաղմոսերգուի բառերից "Տէր լոյս իմ եւ կեանք իմ եւ յունմէ երկեայց, Տէր ապաւեն կենաց իմոյ ես յունմէ դողացայց": Գիշերը իբրև խավար ժամանակ երկյուղալից համգամանք ուներ քրիստոնյաների համար: Նրանք մտածում էին, որ խավարի իշխանը, բանսարկուն, չարը, սատանան իր ավերիչ գործը կատարում է այդ խավարում: Այս իսկ պատճառով քրիստոնյա մարդու պարտականությունն է խնդրել Աստուծո օգնությունը, հրեշտակների հսկողությունը իր վրա՝ քնած ժամանակ:

7. Հանգստյան ժամերգություն

"Հասարակաց աղոթից ժամեգութեանց" շարքից վերջինն է Հանգստյան ժամերգությունը՝ ուղղված ի դեմս Յոր Աստուծո: Իբրև տնօրինական խորհուրդ գտնում ենք հետեւյալ բացատրությունը. "Զի պահպանողական աջով Միածնի պահեսցի զմեզ ի խաւարային գիշերի":

Կարծվում է, որ առաջներում այս ժամերգությունը շարունակումն եւ լրացումն է եղել խաղաղականի, որովհետեւ տարբեր խորհուրդ եւ տարբեր իմաստ չունի այն խաղաղականից: Պատմականորեն եւս վերջինն է այս ժամերգությունը, որը սկզբնապես եղել է առտնին աղոթք:

Ասորի Հակոբիկյան, Հնդիկ Մալաբար, Ղպտի (Եգիպտոսում) եւ Եթովպիայի Եկեղեցիների հետ բաժանվելով Բյուզանդական կայսրության եւ Հռոմի Եկեղեցական Աթոռներից, Հայ Եկեղեցին ապոեց ինքնանվիով եւ ինքնուրույն կյանքով ու զարգացումով: Բնական է, որ նման պայմաններում առաջանային նաև կանոնական եւ ծիսական տարբերություններ Հայ եւ Օթրողոքս Եկեղեցիների միջեւ, որոնցից ներկայացնում ենք նրանք, որոնք դարերի ընթացքում վիճաբանությունների առարկա են եղել Եկեղեցիների միջեւ միութենական փորձերի ընթացքում:

1. Քրիստոսի Ծննդյան տոնը Յունվարի 6Կին տոնելու սովորությունը

Յնուց ի վեր Հայ Եկեղեցին Քրիստոսի Ծննդյան տոնը նշել է հունվարի 6Կին, Քրիստոսի Մկրտության տոնի հետ միասին, մինչ մյուս Եկեղեցիները այն տոնում են դեկտեմբերի 25Կին, իսկ Մկրտությունը՝

հունվարի 6կին:(թե 7կին): Դեռ վաղ միջնադարից սկսած այս տարբերությունը տեղիք է տվել բազմաթիվ վիճաբանությունների հայ եւ օտար (հույն, ասորի, վրացի եւ այլն) Եկեղեցիների աստվածաբանների միջև:

Գ դարի վերջերից հունվարի 6կին տոնվում էր «Հայտնություն» Ռոբերտօնկը), կամ «Աստվածահայտնություն» (Երեղեջկը) տոնը, որը իր մեջ ընդգրկում էր Քրիստոսի թե՛ Ծննդյան եւ թե՛ Մկրտության հիշատակները:

Տոնակատարությունը սկսվում էր հունվարի 5կի Երեկոյան եւ շարունակվում կեսգիշերից հետո: Երեկոյան կատարվում էր ջրի սրբագրությունը, որի մեջ ողջ գիշեր մկրտվում էին նախորդ տարվա ընթացքում քրիստոնեական վարդապետությամբ սնված Երեխանները: Հիմնական տոնակատարությունը կատարվում էր հունվարի 6կին (ԹԱ ԽՄ, ԽձԾ):

Հոռոմում, 336 թ. սկսած, Քրիստոսի Ծննդյան տոնը սկսում է կատարվել առանձին, դեկտեմբերի 25կին: Այդ օրը հեթանոսները տոնում էին Անպարտելի Արեւի տոնը (Լջմջեկվ Վրիկվ Կլցկչմկ) այսինքն լույսի հաղթանակը խավարի նկատմամբ, ցերեկի երկարումը գիշերվա նկատմամբ: Եթանոսական այս տոնին Հոռոմի քրիստոնյաները հակադրեցին ճշնարիտ Լույսի, Արդարության Արեւի՝ Քրիստոսի Ծննդյան տոնը: Քրիստոսի Ծննդուղ դեկտեմբերի 25կին տոնելու Հոռոմի Եկեղեցու նախաձեռնությունը նախ տարածվեց Արեւմուտքում, իսկ ապա անցավ Արեւելք՝ 376թ. Անտիոքում (ԹԱ ՉՐ, Խոր), 433թ. Ալեքսանդրիայում (ԹԱ յ.օշխի), 549թ. Երուսաղեմում եւ այլն (ԹԱ ՊՂ, ՕՊ):

Հայ Եկեղեցին, սակայն, պահպանել է հնավանդ սովորությանը:

2. Տեառնընդառաջի տոնը փետրվարի 14կին տոնելու սովորությունը

Տեառնընդառաջը, իբրեւ տերունական տոն, կատարվել է Երուսաղեմում Կ8 դարից սկսած, իսկ 8 դարում այն տոնվել է նաև Ասորինում եւ Եգիպտոսում, միշտ փետրվարի 14կին, այսինքն Քրիստոսի Ծննդյան տոնից հունվարի 6կից, 40 օր հետո:

Հուստինոս Ա կայսրը (518Ա527) Տեառնընդառաջի տոնը ներմուծում է Կ. Պոլիս եւ փետրվարի 14կից փոխադրում փետրվարի 2Աը, միաժամանակ հաստատելով այն իբրեւ տերունական տոն, քանի որ մինչ այդ շատ վայրերում չէր դասվում տերունական տոների շարքին: Իսկ Հուստինիանոս կայսրը (527Ա565) հրամայում է այն տոնել ողջ կայսրության մեջ, փետրվարի 2Աին՝ դեկտեմբերի 25կից 40 օր հետո:

Եվ քանի որ Հայ Եկեղեցին Քրիստոսի Ծննդուղ տոնում է հունվարի 6կին, ապա Տեառնընդառաջի տոնն էլ շարունակում է տոնել 40 օր հետո, փետրվարի 14կին:

3. Ավետման տոնը ապրիլի 6կին (7կին) տոնելու սովորությունը

Օրթոդոքս եւ Կաթոլիկ Եկեղեցիները այս տոնը տոնում են մարտի 25կին, Քրիստոսի Ծննդյան տոնից 9 ամիս առաջ: Ապրիլի 6կին տոնելու Հայ Եկեղեցու սովորությունը նույնական է, կապված Ծննդյան տոնը հունվարի 6կին տոնելու հետ:

4. Հաղորդության Ա. Բաժակի ընծաների հարցը

Հաղորդության Ա. Բաժակի մեջ Հայ Եկեղեցին օգտագործում է անապակ գինի եւ անխմնո՛ բարար հաց, մինչ Օրթոդոքս Եկեղեցին օգտագործում է թթվանոր հաց եւ գինու հետ խառնում տաք ջուլ: Կաթոլիկ Եկեղեցին նույնական գինու հետ ջուլ է խառնում, սակայն նշխարը պատրաստում է բաղարջ՝ առանց թթվանորի, հացից: Քաղկեդոնական վիճաբանությունների ժամանակ հույները բաղարջ հացը դիտում էին իբրեւ Քրիստոսի մեջ միայն Աստվածային բնության ընդունում, եւ Հայոց կողմից թթվանորի մերժումը համարում մերժում Քրիստոսի մարդկային բնության: Իրականում Հայ Եկեղեցին բաղարջ հաց է օգտագործում հետեւելով առաքելական հնավանդ սովորությանը: Հրեական Պատեքի ժամանակ սեղանի վրա մի-

այն բաղարջ հաց էր դրվում: Հետեւաբար եւ Թրիստոս Վերջին ընթրիքի ժամանակ բաղարջ հաց վերցրեց, օրինեց, գոհացավ եւ տվեց իր աշակերտներին՝ ասելով. «Առէք, կերէք, այս է մարմին իմ»:

Այնուհետեւ Թրիստոս վերցրեց անարատ գինով Ս. բաժակը, օրինեց, գոհացավ եւ բաժանեց իր աշակերտներին՝ ասելով. «Արբեք ի սմանն ամեներեան, այս է արիւն իմ նորոյ Ուխտի»:

Բ դարում Հռոմի Ալեքսանդր (105և115) եպիսկոպոսը սկսեց Հաղորդության գինու հետ ջուր խառնել, պատճառաբանելով, թե Խաչի վրա Թրիստոսի կողից արյուն եւ ջուր բխեց: Հակառակ բազմաթիվ ընդդիմությունների, այս նորամուծությունը որդեգրվեց ինչպես Հռոմում, այնպես էլ Բյուզանդիայում:

Հայ Եկեղեցին, սակայն, անաղարտ պահեց առաքելական սովորությունը, բացատրելով, որ Թրիստոսի կողից բխած ջուրը ոչ մի կապ չունի Հաղորդության բաժակի հետ, այլ այն Սկրտության խորհրդանիշն է, իսկ արյունը՝ Հաղորդության: Երբ Թրիստոս Վերջին Ընթրիքի ժամանակ հաստատեց Հաղորդության խորհրդությունը, օգտագործեց անապակ գինի:

5. «Ս. Աստուած» երգի մեջ «Որ խաչեցար» բառերի հավելման հարցը

6. Սրբապատկերների նկատմամբ Հայ Եկեղեցու վերաբերմունքը

Դ դարից սկսած Հայ Եկեղեցու վարդապետները բազմից մեղադրել են բյուզանդացիներին չափազանցված պատկերապաշտության մեջ: Իրենց հերթին՝ բյուզանդացի վարդապետները մեղադրել են հայերին պատկերամարտության մեջ:

Պատմակրանասիրական վկայություններն ու մեզ հասած մշակութային կոթողների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 8 դարից Հայ Եկեղեցում սրբապատկերները լայն կիրառություն են ունեցել ինչպես առանձին պատկերներով, այնպես էլ որմնամկարչության, խճանկարչության, քանդակագրության եւ մանրանկարչության մեջ:

Կունկու դարերում տարբեր վայրերում գոյություն են ունեցել պաշտամունքային նշանակություն ունեցող սրբապատկերներ, ինչպես օրինակ Հավուց Թաոհ Ամենափրկիչը (Դ. դ. փայտե փորագրություն), Վարագա վանքի (972 թ.), Անավարզի Ս. Զորավորաց Եկեղեցու (1104 թ.), Տարսոնի կաթողիկե Եկեղեցու (1197 թ.) Ս. Աստվածածնի պատկերները եւ այլն:

8ԿևՃԿԿ դարերում Հայ Եկեղեցու առաջնորդները պայքարել են Հայաստանում ծայր առած աղանդավորների պատկերամարտական տրամադրությունների դեմ:

Ը դարից սկսած Հայ Եկեղեցում գոյություն է ունեցել նաեւ սրբապատկերների օծման կարգ:

Սրբապատկերների նկատմամբ ցուցաբերած այս դրական վերաբերնունքին զուգահեռ Դ դարում Հայ Եկեղեցու ծոցում երեւան են գալիս նաեւ պատկերամարտական տրամադրություններ: Այդ շրջանի մի շարք հակաքաղկեդոնական Երկերում մերժվում է բյուզանդացիների պատկերապաշտությունը:

969 թ.կմ Անիում գումարված Եկեղեցական ժողովը գահընկեց է հօչակում Հայոց Վահան Ա կաթողիկոսին, այն պատճառաբանությամբ, թե նա օտարադաշտական պատկերներ է ներմուծել Հայոց Եկեղեցիներից ներս, կարգադրել Հայոց Եկեղեցիների Ս. Սեղանների վրա դրվագ խաչը փոխարինել սրբապատկերով եւ առանց սրբապատկերի Ս. Պատարագ չմատուցել:

Կարծում ենք այս հարցում դեր են խաղացել Երկու կարեւոր գործոններ.

Առաջինը արաբական տիրապետությունն է (8ԿԿԿԿ դարեր), երբ Հայաստանում մահմեդական սկզբունքների թելադրանքով արգելված էին մարդակերպ պատկերներ: 716 թվականին Եգիդ Բ խալիֆայի հրամանով Հայաստանում ոչնչացվում են բոլոր սրբապատկերները, հայկական պատկերագրությունը փոխակերպվում է զարդարվեստով: Երկրորդ, 843 թվականին Բյուզանդիայում ուղղափառության հաղթանակով Հայ Եկեղեցական շրջանակների համար «պատկերապաշտությունը» դարձավ Բյուզանդական Եկեղեցու հատկանիշ: Պատկերամարտական տրամադրությունները իշխել են հատկապես Շիրակում, որն անմիջապես սահմանակից էր Բյուզանդական կայսրությանը: Մինչդեռ Բյուզանդական սահմաններից հեռու ընկած Վասպուրականում եւ Սյունիքում սրբապատկերները լայն գործածություն ունեին:

Վերոհիշյալ պատկերամարտական դիրքորոշումը սկսվում է փոխվել ԴԿ ժարում, իսկ ԴԿԿ դարում արդեն ճշտվում է Հայ Եկեղեցու վերջնական դիրքը. «Նրանք, ովքեր արհամարհում են սրբապատկերները, արհամարհում են ոչ թե նյութը, այլ նրանց, ովքեր որ պատկերված են: Սրբերի պատկերներին հավատացյալները պետք է հարգանք նատուցեն, որովհետեւ սրբերը Աստուծոն միջնորդն են: Երկրպագությունը տրվելու է միայն Աստծուն՝ սրբերի ձեռքով, որովհետեւ պետք է երկրպագվի միայն արարչի պատկերը» (Ա. Ներսես Շնորհալի):

Այսօր Հայ Եկեղեցներում սրբապատկերները, բացի Ս. Սեղանից, թեև անհրաժեշտ չեն, սակայն ընդունելի են: Սրբապատկերները, Եկեղեցում օգտագործելուց առաջ, պետք է անպայման օծվեն Ս. Մեռոնով:

7. Մատաղի սովորությունը

Հայ Եկեղեցու պաշտամունքային կարեւոր առանձնահատկություններից մեկն է մատաղի սովորությունը, որի հիմնական իմաստը զոհաբերությունն է. Աստծուն նվեր մատուցելու եւ աղքատներին ողորմություն անելը: Մատաղի արարողությունը, որ հատուկ է միայն Հայ Եկեղեցուն, գոյություն է ունեցել դեռ Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակ: Հնուց ի վեր Հայ Եկեղեցուն սովորությունն է եղել բոլոր մեծ տոներին, սրբերի հիշատակներին, Ս. Խաչ կամ Ս. Սեղան հաստատելու առիթներով, կիրակի օրերին եւ այլ առիթներով Ս. պատարագից հետո մատաղ անել, որպեսզի հավատացյալները Ս. Հաղորդությամբ Քրիստոսի մարմինն ու արյունը ճաշակելուց հետո անմիջապես անսուրբ կերակուր չընդունեն, այլ նախ մատաղի օրինված միս ուտեն եւ ապա այլ կերակուրներ:

Մատաղը արվում է տարբեր նպատակների համար, ինչպես օրինակ.

ա. Որեւէ փորձանքից ազատվելու կամ հաջողության հասնելու առթիվ Աստծուն գոհություն մատուցելու համար:

բ. Իբրև բարեխսություն ննջեցյալների հոգիների հանգստության համար:

գ. Աստծուց փրկություն եւ մեղքերի թողություն հայցելու համար եւ այլն:

Մատաղը երկու նյութ ունի՝ կենդանին եւ աղը:

Կենդանին կարող է լինել արջառ, ոչխար, արլոր, աղավնի եւ այլն: Այսօր ընդունված է մատաղ անել արու կենդանիներ, թեև հնում ընդունելի է եղել նաև էզի զոհաբերումը: Քանի որ մատաղը Աստծուն մատուցվող նվեր է, ապա պետք է որ Արքելի, Նոյի, Արքահամի եւ մյուս նահապետների հետեւողությամբ ամենաաջնահատ եւ ամենաաջեր զոհել: Խեղանդամված, արատավոր կենդանին չի կարելի մատաղ անել: Մատաղի միսը չի կարելի պահել տանը իբրև ուտելիք, այլ նույն օրը պետք է սպառել: Արջառ գենելու դեպքում պետք է 40 ընտանիքի բաժանել կենդանու մսից, եփելուց հետո, ոչխարի դեպքում՝ 7 ընտանիքի, աթլորի՝ 3: Աղավնու պարագային նախընտրելի է ոչ թե նորթել, այլ բաց թողնել:

Եթե մատաղը օրինվում եւ նորթվում է վաճառքում, ապա, ըստ հնագույն կանոնների, մորթին եւ մի թեւը պիտի նշիրել վաճառին:

Մատաղի երկրորդ նյութը, ինչպես նշեցինք, աղն է: Մատաղի աղը պետք է օրինել: Այդ օրինությունը կատարվում է մատաղը կուռքերին մատուցած զոհերից տարբերակելու համար: Աղը խորհրդանշում է առաջանակներին, ըստ Քրիստոսի խոսքի. «Դուք եք աղն երկրի» (Մատք. Ե 13), իսկ անբան կենդանիները խորհրդանշում են հեթանոսներին: Եվ ինչպես որ առաջաների խոսքերը սրբում են մեզ, այնպես ել աղը սրբում է անսունին:

Մատաղի պատրաստման եղանակը այսօր միսը միայն օրինված աղով եւ ջրով խաշելն է, մինչ հնում, ինչպես վկայում է Ս. Գրիգոր Տաթեւացին, այն ողջակիզել են. «ի հուր խորովեալ» (Էջ 657): Այս ձեւը նմանվում է այսօր հույների մոտ պահպանված զատկական զարի ողջակիզման ձեւին:

Պատմության ընթացքում, ինչպես նաև այսօր, օտար Եկեղեցականներն ու հայ աղանդավորներն (ինչպես օրինակ՝ քոնդրակեցիները) ու այսօրվա բողոքականները մեղադրում են մեզ մատաղի հարցում, համարելով այն հրեական սովորություն, հեթանոսական զոհի, բարբարոսություն եւ այլն: Հայոց մատաղի

սովորությունը ազգային, խորապես մարդասիրական եւ քրիստոնեական մի երեւույթ է, որ հնարավորություն է տալիս հավատացյալին հաղորդակցվելու Աստուծոն հետ, օգնելու իր նմաններին, ցուցաբերելու զոհողության ոգի եւ այլն: Եվ ինչպես Ս. Գրիգոր Տաբեացին է ասում. այլաբանորեն «մատաղն ստուեր եւ օրինակ է ճշմարիտ պատարագին Քրիստոսի» (էջ 657): Մատաղի հիմքերը բարձրանում, հասնում են Արելի, Նոյի, Աբրրահամի, Իսահակի, Հակոբի, Մովսեսի եւ մյուս նահապետների մատուցած ու օրինադրած զոհերին: Նոյն հնքը՝ Քիսուս Քրիստոս, Վերջին Ընթրիքի ժամանակ ճաշակեց զատկական գառից, որ մատաղի մի սովորություն էր, օրինադրված Մովսես մարգարեի կողմից:

8. Առաջավորաց Պահքը

Հատուկ է միայն Յայ Եկեղեցուն: Լինում է Մեծ Պահքից 3 շաբաթ առաջ: Պահանջվում է խիստ պահեցողություն: Հնում թուլատրվել է միայն աղ ու հաց ուտեն: Այդ օրերին չի թույլատրվել ս. պատարագ մատուցել:

Առաջավորաց Պահքի խորհուրդը հեթանոսական ապականությունից մարդկային 5 զգայարանների սրբումն է: Յին Եկեղեցուն սովորություն կար մկրտությունից առաջ 5 օր ծոն պահել: Ս. Գրիգոր Լուսավորիչը նույնպես հրամայում է Տրդատ թագավորին և մյուսներին մկրտությունից առաջ 5 օր ծոն պահել, որի շնորհիվ էլ Տրդատը եւ ուրիշներ փրկվում են այսահարությունից: Այդ պատճառով էլ Առաջավորաց Պահքը կոչվում է նաեւ փրկության պահք: Յամածայն Յայ Եկեղեցու վարդապետների Առաջավորաց Պահքը հաստատել է Ս. Գրիգոր Լուսավորիչը, ի հիշատակ Վերոհիշյալ ծոնապահության: Այս պահքի Առաջավորաց կոչվելու Վերաբերյալ կա երկու մեկնություն. ա. իբրեւ կարապետ Մեծ Պահքի. թ. իբրեւ Յայնց առաջին պահքը: Առաջավորաց Պահքը թյուրիմացարար անվանվել է նաեւ Ս. Սարգսի պահք, քանի որ Առաջավորաց Պահքին հաջորդող շաբաթ օրը Յայ Եկեղեցին տոնում է Ս. Սարգսի տոնը: Միջնադարում հույներն ու վրացիները մեղադրել են Յայ Եկեղեցուն Առաջավորաց Պահքի համար, կապելով այն Ս. Սարգսի անվան հետ, որին էլ Վերագրելով կախարդություններ:

Յայ մատենագիրների վկայության համածայն Առաջավորաց Պահքը հնում գոյություն է ունեցել նաեւ հույների ու լատինների մոտ:

Առաջավորաց Պահքի 5կրտ օրը (ուրբաթ) հիշատակվում է Ս. Յովնանի քարոզությունն ու Նինվեի ապաշխարությունը, ոչ իբրեւ Ս. Յովնան մարգարեի տոն, այլ իբրեւ մեծ ապաշխարության եւ ծոնապահության օրինակ:

ՅԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՐԳԸ.

ԱՍՏՎԱԾՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն Օրբողոքս Եկեղեցում ընդունված 7կի, Յայ Եկեղեցին ունի 9 ժամերգություն: ԵՎ եթե Օրբողոքս Եկեղեցում առաջինը համարվում է Երեկոյան ժամերգությունը, Ենելով այն բացատրությունից, թե մուրն ընկնելով սկսվում է նոր օր, ապա Յայ Եկեղեցում առաջինը Գիշերայինն է:

Յայ Եկեղեցու ժամերգություններն են.

1. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Նվիրված է Յայր Աստուծոն փառաբանությանը: Կատարման ժամանակը կես գիշերն է: Ունի հետեւյալ իմաստը. քունք Աստուծոն կողմից շնորհված բարիք է. շնորհակալություն եւ գոհություն Աստծուն այդ բարիքի համար: Խնդրանք առ Աստված, որ գիշերվա շարունակությունը անցնի խաղաղ, իսկ հաջորդ օրը՝ առարինի եւ անարատ:

2. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Նվիրված է Որդի Աստուծո փառաբանությանը: Կատարվում է արշալույսին: Այն խորհրդանշում է Քրիստոսի երեւալը Յուղաբեր կանանց, ամփոփելով Քրիստոսի հարության եւ փրկագործության խորհուրդները:

3. ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Նվիրված է Հոգի Աստծուն: Նախկինում եղել է Առավոտյանի մի մասը: Խորհրդանշում է Քրիստոսի Հարությունը եւ աշակերտներին երեւալը: Հաստատվել է Եզր կարողիկոսի (630և641) կողմից եւ ճոխացվել ԺԲ դաւրում Ս. Ներսես Շնորհալու (1166և1173) գրած երգերով: Կատարվում է արեւածագին, Քրիստոսի Հարությունը նույնացնելով արեւի ծագմանը:

4. ԾԱՇՈՒ Գ ԺԱՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ուղղված է Հոգի Աստծուն: Խորհրդանշում է Եվայի ճաշակումը արգելված պտուղից եւ Քրիստոսվ դատապարտումից ազատումը: Նաեւ հիշատակումն է Քրիստոսի չարչարանքի: Կատարման ժամանակը այսօրվա ժամը 9 և 1/2 է: Այն ապաշխարության խորհուրդ պարունակող մի արարողություն է:

5. ԾԱՇՈՒ Զ ԺԱՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ուղղված է Հայր Աստծուն: Խորհրդանշում եւ հիշատակումն է Քրիստոսի խաչելության: Կատարման ժամանակը ժամը 12 և 1/2 է: Այս ժամերգությամբ հավատացյալը Աստծուց խնդրում է օգնություն իր մարդկային տկար բնության համար:

6. ԾԱՇՈՒ Թ ԺԱՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ուղղված է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի մահը, որով եւ մարդկության ազատումը դժոխքի իշխանությունից::Կատարման ժամանակը ժամը 3 և 1/2 է:

7. ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ուղղված է Որդի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի թաղումը: Կատարվում է մայրամուտից առաջ: Գիշերվա սեմին հավատացյալը՝ աշխատանքից հոգնած եւ օրվա հոգեկան ալեկոծությունից հետո, խնդրում է Աստծուն պարգևել իրեն խաղաղ գիշեր եւ բարի քուն:

8. ԽԱՂԱՊԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ուղղված է Հոգի Աստծուն: Խորհրդանշում է Քրիստոսի դժոխք իջնելը եւ արդարների տանջանքների դադարեցումը: Կատարվում է մայրամուտից հետո: Նպատակն է ամողորություն եւ խաղաղություն բերել ամենօրյա մեղքերով ծանրաբեռնված մարդու հոգուն:

9. ՀԱՍԳԱՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Ուղղված է Հայր Աստծուն: Նախկինում այս ժամերգությունը նախորդի շարունակությունն էր: Առանձին խորհուրդ չունի: Կատարվում է քնելուց առաջ:

Վերոհիշյալ 9 ժամերգությունները նախկինում կատարվում էին ամեն օր: Այսօր ամենօրյա կատարվում են Գիշերային եւ Առավոտյան ժամերգությունները միասին՝ առավոտյան, եւ Երեկոյան ժամերգությունը՝ Երեկոյան: Մեծ Պահոց օրերին, բացի շաբաթակիրակի օրերից, կատարվում են նաեւ մյուս ժամերգությունները, ըստ հետեւյալ կարգի.

Գիշերային, Առավոտյան, Արեւագալի և առավոտյան նաշու 4, Զ, Թ եւ Երեկոյան և կեսօրին խաղաղականը և Երեկոյան
(Երկուշաբթի, Երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին),

Հանգստյանը և երեկոյան՝
(չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին):

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԸ

1. ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ և

Սկրտության խորհրդի արարողությամբ ենթական սրբվում է Աղամական եւ անձնական մեղքերից, դառնում քրիստոնյա եւ Աստուծոն որդի: Սկրտությունը կատարվում է երկու եղանակով. ջոհի մեջ երեք անգամ ընկղմելով (մանուկներին) եւ գլխի վրա երեք անգամ ջուր լցնելով ու երեք անգամ լվացվելով (չափահամներին):

Սկրտությունը անկրկնելի խորհուրդ է: Հայ Եկեղեցին վավերական է ճանաչում այն բոլոր Եկեղեցիների մկրտությունները, որոնք հավատում են Ս. Երրորդությանը եւ մկրտությունը կատարում «Յանուն Յօր եւ Որդույ եւ Յոգույն Սրբոյ»: Սկրտության ժամանակ երեխային գրկում է կնքահայրը, որի պարտականությունն է մկրտվողի հոգեւորկարոյական դաստիարակությունը:

2. ԴՐՈՇՄ և

Հայ Եկեղեցուն Դրոշմի խորհրդի արարողությունը կատարվում է Մկրտությունից անմիջապես հետո: Մկրտող քահանան Ս. Մեռնոնվ օօնում է երեխայի ճակատը, աչքը, ականջը, քիթը, բերանը, ձեռքերը, սիրտը, մեջքը եւ ոտքերը: Դրոշմի խորհրդով մկրտվածը ստանում է Ս. Յոգու զորացնող եւ պահպանիչ շնորհներ, կյանքի փորձությունները դիմագրավելու համար:

3. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ և

Ապաշխարության խորհրդի նպատակն է քավել մկրտությունից հետո գործված մեղքերը: Այն կատարվում է չորս գործողությամբ.

ա. Ենթական անդրադառնում է իր կատարած մեղքին եւ անկեղծորեն զղջում:

բ. Իր կատարած մեղքը խոստովանում է Աստուծոն եւ Եկեղեցու առաջ: Խոստովանությունը կատարվում է երեք ձեւով.

1. իրապարակային,

2. միայն քահանային,

3. միայն Աստծուն:

Հայ Եկեղեցուն ավելի գործածական է Յերդ ձեւը, որ կատարվում է Ս. Ներսես Շնորհալու մի աղոթքի ընթերցման հետ զուգահեռ, ուր իիշված են բոլոր հնարավոր մեղքերը:

գ. Խոստովանեցնող քահանան սահմանում է ապաշխարության ձեւը (պահք, զոհաբերություն եւ այլն) եւ ժամանակը:

դ. Քահանան արձակում է տալիս ենթակային (թողություն):

Ապաշխարության խորհուրդը կարեւոր նախապայման է հաջորդ՝ Ս. Յաղորդության խորհրդի համար:

4. ՅԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ և

Ս. Յաղորդության խորհուրդը Հայ Եկեղեցին կատարում է բաղարջ հացով եւ անապակ գինիով, ինչպես որ ընդունված էր նախնական Եկեղեցում:

Հայ Եկեղեցուն Յաղորդությունը տրվում է ժողովրդին գինու մեջ թարախված հացի մասնիկով: Նշարը պետք է լինի մեկ հատ: Քահանան օրը մեկ անգամ կարող է պատարագել: Նույն սեղանի վրա օրը միայն մեկ պատարագ կարելի է անել:

5. ԿԱՐԳ ԿԱՄ ԶԵՇՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ և

Զեռնադրության խորհրդով Եկեղեցու սպասավորները ստանում են համապատասխան աստիճաններ: Զեռնադրության խորհրդով անկրկնելի է: Այդ է պատճառը, որ երբ կարգալույժ մեկը ներման է արժանանում, կրկին չի ձեռնադրվում, այլ միայն ապաշխարում է: Կարգալույժ վիճակում նրա կատարած խորհրդակատարությունը, սակայն, վավերական չէ:

6. ՊՍՎԿ ԱՄՌՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ և

Ամուսնության համար անհրաժեշտ է, որ Ենթականները լինեն քրիստոնյա, առողջ, ամուսնական կյանքին ընդունակ, չափահաս (18 տարեկան տղայի եւ 16 տարեկան աղջկա համար), ունենան արենակական 5 եւ խմանիական 4 աստիճանի հեռավորություն, սեր եւ հաճություն:

Բռնությամբ կատարված պսակը անվավեր է: Թույլատրվում է անուսնանալ 3 անգամ:

Օրթոդոքս եւ Կաթոլիկ Եկեղեցիները ընդունում են նաեւ մի այլ՝ յոթերորդ խորհրդորդ՝ Վերջին Օծում, Կարգ կամ այցելություն հիվանդաց եւ այլ անուններով: Ոնանք փորձել են այդ դասել Յայ Եկեղեցու խորհրդների կարգը՝ լրացնելու համար խորհրդավոր 7 թիվը: Վերջին օծումը մեր Եկեղեցում կատարվում է միայն քահանայական օծում ունեցող ննջեցյալների վրա, երբ Ենթակայի մարմինը այլեւս կենդանի չէ եւ բնականաբար աստվածային շնորհների մատակարարումը դաշնում է անհմաստ, որով եւ չի լրացվում խորհրդորդի պայմանները: Կարգ կամ այցելություն հիվանդացը, իր հերթին, չի կարող առանձին խորհրդորդ լինել, քանի որ այդ արարողությամբ իրականում կատարվում են ապաշխարության եւ Յաղորդության խորհրդությունները: Այս մասին հանգանանորեն տես, Արիստակեան, Յայաստանեայց Եկեղեցու պատկերհարկագութիւնը, Ս. Պետերբուրգ, 1904, էջ 309և369:

ՅԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՎՈ ԱՍԻՒԾԱՆՆԵՐԸ

Ա. ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍԻՒԾԱՆՆԵՐԸ

Յայ Եկեղեցու նվիրապետության գլուխն է Յայոց Կաթողիկոսը: Նա ստանալով Ս. Յոգու շնորհները բաշխում է եպիսկոպոսներին, որոնք էլ բաշխում են այդ շնորհները քահանաներին, վերջիններս էլ՝ ժողովրդին: Այսպիսով Յայ Եկեղեցու նվիրապետության մեջ գործում են երեք հիմնական աստիճաններ, որոնք տրվում են ձեռնադրությամբ եւ օծումով:

ա. Քահանայություն: Քահանայի պարտականությունն է հովվել իրեն վստահված հոտը, կատարել Սկրտության, Դրոշմի, Ապաշխարության, Յաղորդության եւ Պասակի խորհրդությունները, ինչպես նաեւ այլ ծիսական արարողություններ:

Յայ Եկեղեցում քահանաները լինում են թե՝ ամուսնացյալ եւ թե՝ կուսակրոն:

Ամուսնացյալ քահանան պետք է ամուսնացած լինի ձեռնադրությունից առնվազն մեկ տարի առաջ եւ ունենա արու զավակ: Այրիացած քահանան կարող է դառնալ կուսակրոն, կամ, Գեւորգ Ե Կաթողիկոսի կարգադրությամբ, երկրորդ անգամ ամուսնանալ: Ամուսնացյալ քահանան կարող է վարել առաջնորդական տեղապահի պաշտոն:

Կուսակրոն քահանան, որ կոչվում է աբեղա, քահանայական ձեռնադրությունն եւ օծում ստանալու օրը, երեկոյան, տաճարում կատարում է կուսակրունության ուժստ եւ օրինությամբ եպիսկոպոսից ստանում վանականի՝ աշխարհից հրաժարումը խորհրդանշող Վեղարը: Կուսակրոն քահանայի պարտքն է՝ ապրել վանական եւ ուսումնական կյանքով:

բ. Եպիսկոպոսություն: Եպիսկոպոսը աշխարհագրական եւ վարչական մի միավորի Եկեղեցիների վերատեսուչն է: Նրա իրավասությանն է պատկանում քահանաների ձեռնադրությունը, Եկեղեցի օծելը:

Դայ Եկեղեցում Եպիսկոպոսը ձեռնադրվում եւ օծվում է միայն կաթողիկոսի կողմից: Հնում Եպիսկոպոսները սովորաբար ընտրվում էին ամուսնացյալ քահանաներից: Միջին դարերում եւ այսօր Եպիսկոպոսության թեկնածուները ընտրվում են միայն կուսակրոն քահանաներից:

գ. Կաթողիկոսություն: Ի տարբերություն մյուս Եկեղեցիների, Դայ Եկեղեցու կաթողիկոսը մի կարգ բարձր է Եպիսկոպոսությունից, քանի որ ստանում է կաթողիկոսական ձեռնադրություն եւ օծում:

Դայ Եկեղեցում կաթողիկոսը գերագույն դատավորն է, օրենսդրական մարմնի գլուխը: Նրա իրավասության սահմանների մեջ են մտնում Եպիսկոպոս ձեռնադրել, մեռոն եփել, տոներ սահմանել, ազգային և Եկեղեցական ժողովներ հրավիրել եւ արձակել, Դայ Եկեղեցու կառավարության վեկարերյալ կարգադրություններ եւ օրենքներ սահմանել եւ այլն:

Կաթողիկոսը ընտրվում է ազգային և Եկեղեցական ժողովում: Նրա իշխանությունը ցմահ է:

Նվիրապետական այս հիմնական աստիճաններից բացի Դայ Եկեղեցին ունի նաեւ ցածր աստիճաններ, որոնք տրվում են միայն ձեռնադրությամբ: Դրանք են.

ա. Դպրություն: Այս կարգը իր մեջ անփոփում է հնում գոյություն ունեցող սաղմոսերգության, ավելածության, դրանապանության, ընթերւցողության, երդմնեցուցչության եւ ջակարնեցության աստիճանները:

բ. Սարկավագություն: Սարկավագը ընտրվում է դպրուներից եւ պարտականություն ունի ծիսակատակրությունների ժամանակ խնկարկելու եւ քարոզները կարդալու, Ս. Պատարագի ժամանակ Ավետարանը կարեդալու եւ Վերաբերում անելու:

Դպրուները եւ սարկավագները կարող են լինել թե՝ ամուսնացյալ եւ թե՝ կուսակրոն, ինչպես նաեւ կարող են զբաղվել աշխարհիկ այլ աշխատանքներով:

Բ. ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՇԱՆՆԵՐԸ

Դայ Եկեղեցում կան գիտական երկու աստիճաններ.

ա. Մասնավոր վարդապետություն, որ համապատասխանում է աշխարհիկ «գիտությունների թեկնածու» կոչումին:

բ. Ծայրագույն վարդապետություն, որ համապատասխանում է աշխարհիկ «գիտությունների դոկտոր» կոչումին:

Հնում, ընդհուած մինչեւ 20կոդ դարի սկիզբը, այս աստիճանները տրվել են թե՝ ամուսնացյալ եւ թե՝ կուսակրոն քահանաներին: Այսօր տրվում են միայն կուսակրոններին՝ համապատասխան գիտական ուսումնասիրություն պատրաստելուց եւ հաջողությամբ պաշտպանելուց հետո, Եկեղեցական արարողությամբ, Ծայրագույն վարդապետական աստիճան ունեցող Եպիսկոպոսի կողմից:

Մասնավոր վարդապետական աստիճանի տվյալները ենթական ստանում է իմաստություն խորհրդանշող օճագլուխ գավազան, որ իրավունք է տալիս քարոզելու եւ ուսուցանելու:

գ. ՊԱՏՎՈ ԱՍՏԻՇԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ

1. Պատվո աստիճաններ

ա. Ավագություն և տրվում է վաստակաշատ ամուսնացյալ քահանաներին:

բ. Արքություն և տրվում է վաստակաշատ Եպիսկոպոսներին:

2. Պարգեւատրումներ

ա. Խաչակրություն և լանջախաչ կրելու իրավունք, որ տրվում է թե՝ ամուսնացյալ, վաստակ ունեցող քահանաներին /պղնձե արծաթազուր կամ ոսկեզօծ/ եւ թե՝ վարդապետներին /արծաթե ոսկեզօծ, ականակուռ/:

բ. Ծաղկյա սեւ փիլոն և տրվում է վաստակ ունեցող ամուսնացյալ քահանաներին եւ վարդապետներին:

գ. Ծաղկյա մանուշակագույն փիլոն և տրվում է ծայրագույն վարդապետներին:

Պատվո աստիճանները եւ պարզեւատրումները տրվում են առանց Եկեղեցական արարողության, կաթողիկոսական կոնդակով կամ թեմակալ առաջնորդ եպիսկոպոսի գրությամբ:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԱՑՈՒՅՑԸ

Հայ Եկեղեցական օրացույցում կամ երեք կարգի օրեր՝ տերունական տոներ, սրբերի հիշատակ-ներ եւ պահոց օրեր::

Ա. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Տերունական կամ տերունի են կոչվում այն տոները, որոնք նվիրված են Քրիստոսի կյանքի զանա-զան դեպքերին, Ս. Աստվածածնին, Ս. Խաչին եւ Եկեղեցուն:

Ա. ՔՐԻՍՏՈՍԻ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԵՐ

Քրիստոնեության առաջին դարերին տերունի տոները կազմում էին երկու խումբ՝ Աստվածահայտ-նություն եւ Հարություն:

ա. Աստվածահայտնությունը, որ հիշատակությունն էր Քրիստոսի երկրավոր կյանքի առաջին դեպքերի, կատարվում էր հունվարի 5և13ևը, իսկ բուն տոնակատարությունը՝ հունվարի 6ևին: Այդ տոնակա-տարության ընթացքում հիշատակվում էին Ավետումը, Ծնունդը, Անվանակոչությունը, Քառասնօրյա գա-լուստը տաճար, Մկրտությունը եւ այլն: Ժմանակի ընթացքում այս հիշատակները միմյանցից բաժանվե-լով դարձան առանձին տոներ: Այսօր Հայ Եկեղեցին Քրիստոսի Ծնունդը եւ Մկրտությունը տոնում է միեւ-նույն օրը՝ հունվարի 6ևին, Անվանակոչությունը՝ հունվարի 13ևին, Քառասնօրյա տաճար գալուստը՝ փե-տրվարի 14ևին, Ավետումը՝ ապրիլի 7ևին:

բ. Երկրորդ տոնական խումբը կոչվում էր Հարություն ամփոփելով Քրիստոսի երկրային կյանքի վերջին դեպքերը՝ Երուսաղեմ մուտքը (Ծաղկազարդ), Մատնությունը, Չարչարանքը, Խաչելությունը, Մա-հը, Թաղունը, Հարությունը եւ Համբարձումը: Այս տոնական խումբը փակվում էր Հոգեգալստյան հիշա-տակումով՝ ի հիշատակ Ս. Հոգու՝ հրեղեն լեզուների տեսքով առաքյալների վրա իջնելուն:

Այսօր Հարության տոնի բաղկացուցիչ մասերը նույնական բաժանվել եւ տոնվում են առան-ձինևառանձին՝ Ծաղկազարդ, Հարություն, Համբարձում եւ Հոգեգալստյան տոներով:

Պայծառակերպություն, Այլակերպություն կամ Վարդապառ

Աստվածահայտնության եւ Հարության տոներից բացի կարեւոր տոն է նաև Այլակերպությունը, որ ծանոթ է նաև Պայծառակերպություն կամ Վարդապառ անուներով եւ որ Քրիստոսի երկրային կյանքի եր-րորդ տարվա ամռանը՝ Թաքոր լեռան վրա տեղի ունեցած Քրիստոսի այլակերպության հիշատակն է: Քրիստոս իր երեք աշակերտների՝ Պետրոսի, Հակոբոսի եւ Հովհաննեսի հետ բարձրանում է Թաքոր լեռը,

ուր նրանց երեւում են Մովսես եւ Եղիա մագարեները. Զրիստոս, մինչ խոսում է նրանց հետ, այլակերպ վում է, նրա հագուստները դառնում են ծյունից ավելի սպիտակ: Այս դեպքը մեծ տպավորություն է քողնում աշակերտների վրա եւ նրանց հիշողության մեջ մնում իբրև կարեւոր իրադարձություն, որ հետագայում վերածվում է տոնի:

Ըստ ավանդության, Ս. Գրիգոր Լուսավորիչը կարգադրում է այս տոնը կատարել Հայոց տոմարի տարեգլխին, նավասարդի 1ևին, որ գուգադիպում էր օգոստոսի 11ևին, հավանաբար մոռացության տալու համար ամանորի հեթանոսական տոնակատարությունը: Պայծառակերպության տոնը, որ կոչվում է նաեւ Վարդավառ, պահպանում է հեթանոսության որոշ սովորություններ, ինչպես օրինակ միմյանց վրա ջուր լցնել, աղավնի թոցնել եւ այլն, որոնց տրվել են քրիստոնեական իմաստ, դիտելով դրանք որպես Զրիեղեղի եւ Նոյան աղավնու հիշողություններ:

Զ դարում, Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի (574և604) ժամանակ, հաշվի առնելով, որ օգոստոսին, նույն օրերին կատարվում էր նաեւ Աստվածածնի վերափոխման տոնը, Պայծառակերպության տոնը, իբրև Տերունի տոն, կցվում է Հայության տոնախմբին եւ փոխադրվելով Յոգեգալստյան հաջորդող է կիրակի օրը, դառնում է շարժական, տատանվելով հունիսի 28ևօգոստոսի 1ևի միջեւ:

Պայծառակերպության տոնը Հայ Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է:

Բ. Ս. Աստվածածնին նվիրված տոները

1և2 Հղություն եւ ծնունդ Աննայից

Աստվածածնի ծնողները՝ Յովակիմը եւ Աննան, մինչեւ ծերություն զավակ չունեին եւ միշտ աղոթում ու խնդրում էին Աստծուն, որ իրենց զավակ պարզեցի: Նրանց աղաքանքները լսելի են լինում եւ Աստված պարգևելում է մի աղջիկ, որին կոչում են Մարիամ: Այս դեպքի հիշատակը Եկեղեցին տոնում է երկու տոներով.

Յղութիւն յԱննայէ և դեկտեմբերի 9ևին

Ծնունդը՝ և սեպտեմբերի 8ևին:

Աստվածածնի հղության նասին տեղեկություններ քաղում ենք Յակոբոսի նախավետարանից եւ Մատթեոսի պարականուն ավետարանից: Եկեղեցին, Գ Տիեզերական ժողովից հետո, օգտագործեց պարականոն երկերի պատմությունները, ուր պահպանված էին Եկեղեցու բանավոր ավանդությունները Աստվածածնի կյանքի մասին, եւ հաստատեց տարբեր տոներ նրա հիշատակին:

Բյուզանդիայում հղության տոնը հիշվում է 8ևրդ դարից, Արեւմուտքում՝ 9ևրդ դարից: (Սխոլաստիկ Աստվածաբանության ազդեցությամբ արեւմուտքում առաջ եկավ Աստվածածնի անարատ հղության դավանանքը, որը պաշտոնապես հօչակվեց որպես դոգմա 1854 թ., ըստ որի Ս. Կույսի հղությունն ու ծնունդը Յովակիմից ու Աննայից սովորական մարդկանց ծնունդի նման չէր, բնական չէր, այլ անարատ, զերծ սկզբնական ադամական մեղքից):

Աստվածածնի ծննդյան տոնը հաստատվել է 5ևրդ դարի վերջին եւ 6ևրդ դարի սկզբին Երուսաղեմում, որը կապված է այստեղ՝ Պրոռատիկեում գտնվող Ս. Աստվածածնի տաճարի հետ:

Յօնմում տոնը մուտք է գործել 7ևրդ դարում հոյն վանականների միջոցով, որոնք այստեղ փախան արաբներից: Քիչ անց Սերգիոս պապը այս տոնը պաշտոնապես ներմուծեց Արեւմուտյան Եկեղեցու տոնակարգում:

Հայ Եկեղեցուն Աստվածածնի Ծննդյան տոնը հաստատուն կերպով սկսվել է տոնվել 13ևրդ դարից:

3. Ընծայումը

Ըստ ավանդության, որ արձանագրված է Յակոբոսի նախապետարանում, երեք տարին լրանալուց հետո Մարիամը ընծայվում է տաճարին, ուր եւ մնում է մինչեւ իր նշանվելը:

Տոնի հաստատումը առնչվում է այն տաճարի հետ, որ կառուցեց Յուստինիանոս կայսրը Աստվածածինի պատվին իին հրեական տաճարի տեղը, Մորիա բլրի վրա: Տաճարի նավակատիքը տեղի ունեցավ 543 թ. նոյեմբերի 21կին:

638 թվականից հետո, երբ Յուստինիանոսի կառուցած տաճարը վերածվեց մուսուլմանական մզկիթի, նավակատիքի տոնակատարությունը տարածվեց ողջ քրիստոնեական աշխարհում:

7ևրդ դարի վերջին եւ 8ևրդ դարի սկզբին ընծայման տոնը արդեն կար Կ. Պոլսում: Արեւմուտքում տոնը երեւան է գալիս 10և11ևրդ դարերում: Յայ Եկեղեցում մուտք է գործել 18ևրդ դարում:

Բոլոր Եկեղեցիները տոնում են նոյեմբերի 21կին:

4. Ավետում

Աստվածածին նվիրված տոներից միակն է, որ հիմնված է Նոր Կտակարանի վրա (Ղուկ. Ա 26և38): Գաբրիել հրեշտակապետը Ավետում է Մարիամին քրիստոսի ծննդյան մասին: Յետեւաբար այս տոնը Աստվածածինի հրության, միաժամանակ նաև քրիստոսի մարդեղության տոնն է:

Երբ Աստվածահայտնության տոնակատարությունը դեռ չէր բաժանվել, տոնի ճրագալույցի օրը հատկապես նվիրված էր Ավետմանը, Աստվածահայտնության տոնի չորեքշաբթի, ինչպես նաև տարվա բոլոր չորեքշաբթի օրերը նվիրված են Աստվածածին Ավետման եւ քրիստոսի մարդեղության, որովհետեւ, ըստ ավանդության, Ավետումը տեղի է ունեցել չորեքշաբթի օրը. «Ի չորորորդ օր դարձեալ հրեշտակին, ետ զաւետիմ կուսական» (Շարական):

Տոնի հաստատման համար կարեւոր նշանակություն է ունեցել այն տաճարի կառուցումը, որ կառուցել է Ս. Յեղինեն Նազարետում, այն տաճ տեղը, ուր, ըստ ավանդության Ս. Կույսը ընդունել է Ավետումը: Տաճարի նավակատիքը եւ ամեն տաճի կրկնվող նավակատիքի տոնակատարությունները պատճառ են հանդիսացել տեղական տոնի կատարման, որն էլ աստիճանաբար, է դարից սկսած տարածվել է ողջ քրիստոնեական աշխարհով մեկ:

Յայ Եկեղեցին Ավետումը տոնում Ապրիլի 7կին, իսկ Օրթոդոքս եւ Կաթոլիկ Եկեղեցիները՝ մարտի 25կին:

5. Վերափոխումն Ս. Աստվածածնի

Ս. Կույսի վերափոխման տոնը Յայ Եկեղեցու հինգ մեծ՝ տաղավար տոներից մեկն է, որ կատարվում է օգոստոսի 15կ մերձավոր կիրակի օրը (12և18կ ընթացքում):

Ըստ ավանդության (Յակոբոսի նախապետարան եւ Յովիաննեսի պարականոն ավետարան) Երբ Ս. Կույսը մահանում է, առաջալները նրա մարմինը ամփոփվեց գերեզմանում: Բարթուղիմեոս առաջալը բացակա էր: Եվ երբ, այլ առաջալների հետ, այցելում է գերեզմանը, գերեզմանաբարը վերցնելիս գերեզմանը դատարկ են գտնում:

Եկեղեցու Յայրերը, հիմնվելով այս ավանդության վրա, հաստատում են Վերափոխումն Ս. Աստուածածնի տոնը, ընդունելով, թե նրա մարմինը փոխադրվել, վերափոխվել է երկինք:

Տոնը նախ կատարվել է Երուսաղեմում 5ևրդ դարի սկզբին: Տոնակատարության կենտրոնը Աստվածածնին նվիրված այն տաճարն էր, որ գտնվում է Երուսաղեմից Բերեհեմ տանող ճանապարհի 3ևրդ մղոնի վրա: Օրը՝ օգոստոսի 13կը: Յետագայում տոնակատարության վայրը փոխադրվում է Գեթեման, այն վայրը, ուր գտնվում էր Աստվածածնի գերեզմանը եւ օրը որոշվում է օգոստոսի 15կը:

6ևրդ դարում տոնը տարածվել էր Սիրիա, նույն դարի վերջին Մորիկ կայսրը պարտադիր տոն համարեց ողջ կայսրության մեջ:

7Կրդ դարի սկզբին անցել է նաեւ Արեւմուտք:

6. Ս. Աստվածածնի գոտիի գյուտը

Արկադիոս կայսեր օրով (395և408) Երուսաղեմում գտնվեց Ս. Աստվածածնի գոտին: Այն տարվում է Կ. Պոլիս: Կառուցվում է նոր Եկեղեցի, գոտին գետեղվում այնտեղ՝ ի պաշտամունս հավատացյալների եւ տոն հաստատվում օգոստոսի 31կին:

18Կրդ դ. Յայ Եկեղեցու տոնացույց կազմողներից ոմանք հիշել են այս տոնը՝ «քե կամիս տօնել՝ տօնեա» հավելվածով, իսկ Սիմեոն Երեւանցին (1763և1780) հաստատում դարձրեց այն, գետեղելով օգոստոսի 26Նսեպտեմբերի 1Կի համդիպող կիրակի օրը:

7. Ս. Աստվածածնի տուփի գյուտը

Աստուածածնի գոտու գյուտից քիչ անց գտնվում է նաեւ նրա քողը՝ տուփի մեջ դրված:

Երկու հույն իշխաններ ուխտի են գնում Երուսաղեմ: Գալիլեա հասնելով տեսնում են մի հրեա կնոջ տան առաջ հավաքված բազմություն, հիվանդներ: Ներս են մտնում եւ տեսնում մի տուփ. հրեա կինը հաղորդում է, որ այն պատկանել է Ս. Կույսին: Պատրաստել տալով ճիշտ կրկնօրինակը, կարողանում են Երուսաղեմից վերադարձին փոխել այն: Ս. Կույսի հրական տուփը տանում են Կ. Պոլիս ու համձնում պատրիարքին: Վերջինս գետեղում է այն Ս. Աստվածածնի Եկեղեցում եւ հաստատում տոն՝ Ս. Աստվածածնի տուփի գյուտը, հուլիսի 2Կին:

Այս տոնը նոյնական հաստատում կերպով մեր Եկեղեցու տոնացույցի մեջ մտել է Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի կարգադրությամբ, Յոգեգալստյան Ե կիրակին (35 օրերի շարժականությամբ, հունիս 14Նոյնիւ 18Կի միջեւ):

գ. Ս. Խաչին նվիրված տոներ

Խաչի տոները խառն են ուրախությամբ եւ սգով, սգով՝ Քրիստոսի Խաչելության համար, ուրախությամբ՝ Քրիստոսի Յարության:

1. Գյուտ Խաչի

Այս տոնը Քրիստոսի Խաչափայտի գտնվելու հիշատակությունն է:

327 թ. Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Յեղինե թագուհին, ուխտի գնալով Երուսաղեմ հետամուտ է լինում Քրիստոսի Խաչափայտի գինվելուն: Մինչ այդ, ի նախատինս քրիստոնյաների, Գողգոթան, որ Քրիստոսի Խաչելության Վայրն էր, դարձել էր աղբանոց, Ս. Խաչն էլ թաղվել աղբի տակ: Յուղա անունով մի հրեա գիտունի թելադրություններով պեղումներ կատարելով գտնում են երեք խաչափայտեր: Որոշելու համար թե ո՞րն է այդ խաչերից Քրիստոսինը, մի մահացած պատանու դի են դնում դրանց վրա: Քրիստոսի խաչափայտի վրա պատանին հարություն է առնում: Այդ ժամանակ Երուսաղեմի Կյուրեղ Եպիսկոպոսը բարձրացնում է Ս. Խաչը ի Երկրապագություն հավատացյալների:

Այս դեպքի հիշատակը Յայ Եկեղեցին տոնում է հոկտեմբերի 26Կի մերձավոր կիրակի օրը (23և29Կի միջեւ), օրթոդոքսները՝ Խաչվերացի տոնի հետ միասին՝ սեպտեմբերի 14Կին, կաթոլիկները՝ մայիսի 3Կին:

2. Խաչի Երեւման տոնը

Այս տոնը հիշատակն է Երուսաղեմում խաչի նշանի երեման, որ տեղի է ունեցել 351 թ.ի մայիսի 19-ին: Օրը ցերեկով երկնքում, Գողգոռայից մինչեւ Զիթենյաց լեռը, Երեւում է լուսապայծառ մի խաչ: Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը այդ զարմանահրաշ դեպքի մասին մի նամակ է գրում Կ.Պոլսի Կոստանդ կայսեր՝ լուսե խաչի երեւումը բացատրելով իբրև ուղղափառ դավանության պաշտպանություն արհուսականության դեմ եւ հորդորում կայսեր եւ կանգնել արհուսականներին պաշտպանելուց: Նամակը պահպանվել է նաեւ հայերեն թարգմանությամբ եւ ընթերցվում է խաչի երեման տոնին:

Կաթողիկ Եկեղեցին այս տոնը չունի:

Օրթոդօքսները այն տոնում են մայիսի 7-ին, Յայ Եկեղեցին՝ Զատկից 28 օր հետո՝ Յինանց Ե Կիրակի օրը, որ կարող է տատանվել ապրիլի 19-ին միջեւ:

3. Սուրբ Խաչի Վեր բարձրացման տոնը

Այս տոնը, որ ծանոթ է Խաչվերաց անունով, Յայ Եկեղեցու հիմգ կարեւոր՝ Տաղավար կոչվող տոներից մեկն է Ս. Խաչի Վեր բարձրացման եւ փառաբանության տոնը:

Ըստ պահանջության, Երուսաղեմի առաջին եպիսկոպոս՝ Յակոբոս Տեառնեղբայրը, ձեռք գցելով Քրիստոսի խաչափայտի մի մասունք, Վեր է բարձրացրել ի տես հավատացյալների, Երգելով «Խաչի քո, Քրիստոս, Երկիր պազանեմք» շարականը:

Երբ Յեղինե թագուհին գտավ Քրիստոսի խաչը, Երուսաղեմի Կյուրեղ եպիսկոպոսը բարձրացրեց այն ի Երկրպագություն հավատացյալների:

333 թ.Մեծն Կոնստանդիանոսը կառուցում է Ս. Յարության տաճարը Քրիստոսի գերեզմանի վրա: Սեպտեմբեր 13-ին կատարվում է նավակատիքը, որից հետո ամեն տարի տոնախմբվում է Ս. Յարության նավակատիքը՝ 8 օր շարունակ: Սեպտեմբերի 14-ին հավաքվում էին Գողգոռա, Վեր բարձրացման Ս. Խաչը ի տես ժողովորի եւ Երկրպագում:

Խաչիվերացի տոնը մեծ նշանակություն է ստանում հատկապես Պարսկական գերությունից վերադարձին, երբ եւ նավակատիքը մղվում է Երկրորդ պլան եւ շեշտվում է Ազատագրված Ս. Խաչի հաղթական վերադարձ Երուսաղեմ: Այդ տեղի է ունեցել 7-րդ դարի Ա կեսին: 614 թ. պարսկակայության պատերազմի ժամանակ պարսկաները գրավում են Երուսաղեմը եւ գերեվարում Քրիստոսի խաչափայտը: Երկարատեւ կրիվներից հետո Յերակլ կայսեր գիշավորությանք (610-641) բյուզանդացիներին հաջողվում է ծնկի բերել պարսկական անտությանը եւ ազատագրել խաչափայտը: Այդ գործում մեծ նպաստ են բերել նաեւ հայկական գիշավորական ուժերը՝ Մժեթ Գնունու գիշավորությամբ: Ազատագրված Խաչափայտը, մեծամեծ հանդիսություններով եւ կրոնական արարողություններով, Յայաստանի վրայով տարվում է Կ.Պոլիս եւ ապա՝ Երուսաղեմ:

Խաչվերացի տոնը Օրթոդօքս Եկեղեցին տոնում է սեպտեմբերի 14-ին, իսկ Յայ Եկեղեցին՝ սեպտեմբերի 11-17-ին միջեւ ընկած կիրակի օրը:

4. Վարագա Ս. Խաչի տոնը

Ըստ հայկական պահանջության, Յոհիվսիմյան կույսերը Յայաստան գալով բնակություն են հաստատում Վաճա լճից հարավարեւելք ընկած Վարագ լեռան վրա: Ս. Յոհիվսիմեն, Վաղարշապատ մեկնելուց առաջ, այնտեղ պահում է Քրիստոսի խաչափայտի մասունքը, որ կրում էր իր վզին:

653 թ. Թողիկ ճգնավորին տեսիլքով հայտնվում է մասունքի պահպատ վայրը. նա իր Յովել աշակերտի հետ աղթելիս, հանկարծակի տեսնում է մի պայծառ լուս Վարագ լեռան վրա, շրջապատված 12 լուսեղեն սյուներով: Լույսերը շարժվում, մտնում են Եկեղեցի ու կանգ առնում Ս. Սեղանի վրա, 12 օր շարունակ, տեսանելի լինելով նաեւ հեռավոր վայրերից: Շուտով հոգեւորականների եւ աշխարհականների մեծ բազմություն է ժամանում, Յայոց Ներսես Գ Շինող կաթողիկոսի եւ Ռշտոնյաց Թեոդորոս նախարարի որդի Վարդ սպարապետի գլխավորությամբ: Այն վայրը, ուր նախապես երեւացել էին լուսե սյուները, կառուցում են մի մեծ Եկեղեցի: Վերակառուցում են նաեւ այն Եկեղեցին, ուր պահ էր մնացել Խաչափայտի

մասունքը: Ներսես կաթողիկոսը սահմանում է Վարագա Ս. Խաչի տոնը, սեպտեմբերի 28-ի մերձավոր Կիրակի օրը (սեպտեմբերի 25-ի հոգևոր 1-ի միջեւ): Յիմնվում է Վարագա Ս. Նշան վանքը:

Ս. Նշանի մասունքը մինչեւ 1021 թ. մնացել է Վարագի վանքում, երբ եւ Սենեքերիմ Արքունի թագավորը իր հետ փոխադրում է Սեբաստիա: Սենեքերիմի մահից հետո, իր կտակի համաձայն, այն նորից փոխադրվում է Վարագա վանք, ուր եւ պահպում է մինչեւ 1651 թ. Երբ գերի է տարվում Խոշաբ: 1655 թ. ազատվելով գետեղվում է Վանի Ս. Տիրամոր մայր Եկեղեցում, որն այնուհետեւ կոչվում է Ս. Նշան, ուր եւ պահպում էր մինչեւ Մեծ Եղեռնը:

Դ. Եկեղեցուն նվիրված տոներ

1. Նոր կիրակի

Զատկին հաջորդող առաջին կիրակի օրն է, որ ընդհանուր Եկեղեցու հաստատության հիշատակությունն է առաջալերի քարոզական գործունեության սկզբնավորությամբ եւ հեթանոսների կոչման խորհրդով:

2. Աշխարհամատրան կիրակի

Քիշատակությունն է Երոսադեմում քրիստոնեական Եկեղեցու հաստատման:

3. Նավակատիքներ

Եկեղեցուն նվիրված տոներ են նաեւ Դ դարում Հեղինե դշխոյի կառուցած չորս Եկեղեցիների՝ Քրիստոսի գերեզմանի, Ծմնոյան այրի, Յամբարձման վայրի եւ Ս. Աստվածածմի գերեզմանի վրա կառուցած Եկեղեցիների նավակատիքների տարեդարձերը, որ տոնվում են Խաչվերացին նախորդող շաբաթ եւ հաջորդող երեքշաբթի, չորեքշաբթի եւ իհնագշաբթի օրերին:

7. Տապանակ Ուխտիի հիշատակությունը

Եկեղեցու տոների կարգին կարելի է հիշել նաեւ Տապանակ Ուխտիի հիշատակությունը՝ Վարդավառին նախորդող շաբաթ օրը: Յին Ուխտի տապանակը (որ պարունակում էր Խրայելական կրոնի ամենավիրական իրերը՝ Տասնաբանյա պատվիրանների քարե տախտակները, Ահարոնի ծաղկյա գավազանը, մանանայով լի ոսկե սափորը եւ այլն) համարելով նախատիպ Քրիստոսի Եկեղեցու:

8. Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնը

Ի հիշատակ Ս. Գրիգոր Լուսավորչի այն տեսիլքի, ըստ որի Քրիստոս, ոսկե մուրճ ձեռքին, վայր իջավ եւ հարվածեց այնտեղ, ուր պիտի կառուցվեր Ս. Էջմիածնի այսօրվա տաճարը:

9. Շողակաթի տոնը

Ի հիշատակ Ս. Էջմիածնի լուսավորչաշեն տաճարի նավակատիքի:

Բ. ՍՐԲԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐ

Առաջին երեք դարերում Քրիստոսից ու նրա առաջալներից հետո մեծ պատիվ են վայելում նահատակները, նրանք, ովքեր զոհում էին իրենց կյանքը, հավատարիմ մնալով այն խոստովանությանը, թե Քրիստոս Աստված է եւ Փրկիչ:

Նահատակների հրաշաննան տոկունությունը բացարվում է նրանց այն հաստատ համոզունով, թե Քրիստոս իրենց հետ է, մասնակցել է իրենց չարչարանքներին, համարելով դրանք նաեւ իր չարչարանքները: Յավատում էին, որ նահատակությունը սրբում է հավատացյալների բոլոր մեղքերը: Այդ իսկ

պատճառով էլ իին Եկեղեցին նահատակությունը համարում էր նաեւ մկրտություն: Յետեւաբար, ջրով մկրտությունից բացի ունենք նաեւ արյամբ մկրտություն:

Յավատքի նահատակները, Տիրոջից ստանալով հաղթանակի պսակը առանց դատաստանի մտնում են արքայություն եւ տեղ ստանում առաքյալների ու արդարների կողքին, Տիրոջ աջ կողմում: Նրանք երկնքում պիտի թագավորեն Տիրոջ հետ միասին եւ նրա հետ միասին դատեն աշխարհը: Միշտ ներկա գտնվելով Տիրոջ առջեւ, նրանք կարող են բարեխոսել իրենց կենդանի եղբայրների համար:

Չորրորդ դարից սկսած նրանց նկատմամբ հարգանքը ավելի է շեշտվում ու զորանում, որովհետեւ նրանց զիհողության արդյունք է համարվում քրիստոնեության հաղթանակը: Սա արտահայտվում է նաեւ քրիստոնեական արվեստի մեջ, ուր նահատակները պատկերվում են ոչ թե իբրեւ չարչարվողներ, այլ իբրեւ հաղողներ՝ պսակված հաղթանակի թագով: Նահատակների հիշատակը սկսում է տոնվել ոչ միայն մի վայրում, այլ աստիճանաբար ողջ Եկեղեցուն: Տոներ են հաստատվում ոչ միայն սրբերի նահատակության օրը, այլ նաեւ նրանց նշխարների փոխադրության առջիվ:

Չորրորդ դարից սկսած, նահատակներից բացի, երեւան են գալիս նաեւ սրբերի այլ խմբեր: Դրանք են.

Ա. ճգնավորներ, որոնք թեեւ չեն նահատակվել, սակայն սրբացել են՝ իրենց կյանքը նվիրելով կրոնական գաղափարներին, ճգնությամբ ապելով:

Բ. Նշանավոր Եկեղեցական հովիվներ եւ առաջնորդներ:

Գ. Ս. Գորի կարեւոր դեմքեր:

ԾԳԱՎՈՐՆԵՐ

Ճգնավորական կյանքը սկսվել է չորրորդ դարում նախ Եգիպտոսում, եւ ապա մեծ թափով Պաղեստինում, Փոքր Ասիայում եւ, Մեծն Արանասի միջոցով, Արեւմություն: Ճգնավորական կյանքի հիմնական հատկանիշներն են.

ա. ճգնություն, որպեսզի մարմինը տկարանա, եւ հոգին կարողանա իշխել մարմնի վրա:

բ. Փափուստ աշխարհից:

Առաջին դարերից սկսած շատ քրիստոնյաներ կարծում էին, թե սովորական բարեպաշտությունը բավարար չէ մարդկանց փրկության համար, հետեւաբար եւ իրենց ենթարկում էին նահատակության: Չորրորդ դարից սկսած, երբ հալածանքները դադարում են, եւ քրիստոնյաները այլեւս հնարավորություն չեն ունենում նահատակվելու առաջ է գալիս ճգնավորների խմբեր, որոնք իրենց կյանքը նվիրում են Քրիստոսին՝ հեռանալով անապատները, որպեսզի իրենց մարմինը ենթարկվի իրենց հոգուն: Այն ժամանակվա քրիստոնյաների հայացքների համաձայն, քրիստոնյաների հիմնական հակառակորդը սատանան է, որ պայքարում է արգելելու համար քրիստոնյային կատարելու իր պարտականությունները: Յալածողները ուրիշ բան չեն, եթե ոչ սատանայի գործիքներ: Երբ հալածանքները վերջ գտան, սատանան փոխեց իր միջոցները եւ սկսեց հեռացնել քրիստոնյաներին իրենց հավատքի՝ մարմնի ու աշխարհի միջոցով: Ըստ ճգնողական հայացքների, մեկը պիտի հաղի դրանց, որպեսզի դառնա Քրիստոսի իրական աշակերտը, իսկ աշխարհին կարելի է հաղթել աշխարհից հեռանալով, մարմնին հաղթել՝ ճգնությամբ: Ովքեր կարողանում են հաղթել սատանայի այս նոր միջոցները համարվում են հավատքի հերոսներ, եւ պաշտվում քրիստոնյաների կողմից նահատակների նման, որոնք եւ դառնում են սրբերի երկրորդ կատեգորիան: Կոեմես Աղեքսանդրացին նրանց կոչում է հոգեւոր նահատակներ: Նույն կարծիքն են հայտնում նաեւ Մեծն Արանասը, Յերոնիմոսը եւ այլն: Իրենց այս նահատակությունների հետեւանքով ճգնավոր սրբերն էլ նահատակների նման ժառանգում են ներկայություն Աստծու առջեւ եւ միջնորդներ դառնում Տիրոջ առջեւ իրենց եղբայրների համար:

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՍՈՐԴՆԵՐ

Չորրորդ դարի կեսերից սկսվում է հարգանք մատուցվել նաեւ եկեղեցու դեկապարներին, որով առաջանում է սրբերի մի նոր դաս՝ մեծ հովիվները: Գնահատվում են հատկապես նրանք, որոնք աչքի են ընկնում հավատքի ճշմարտության համար իրենց պայքարով, որովհետեւ այդ պայքարների միջոցով դարձան հավատքի հերոսներ, հաղթելով սատանայի գործողությունները մի այլ դաշտում՝ ճշմարիտ հավատքի պահպանման հարցում: Իշխում էր այն կարծիքը, որ հերետիկոսությունները սատանայի գործն են, եւ հերետիկոսները՝ նրա օրգանները: Յավատքի համար այս պայքարների պատճառով սրանք նույնապես քրիստոնյաների կողմից համարվեցին նահատակներ, որոնք նույնապես, հաղթելով սատանայի ուժերին, արժանանում են այն պատկին, որ նախատեսված էր նահատակների համար: Սրանց նահատակ համարելը այնքան է հեռու չէ իրականությունից, որովհետեւ դավանաբանական պայքարները այնքան ուժեղ էին, որ հավատքի ուղղակառության համար մարտնչողները հաճախ կրում էին նույն չարչարանքներն ու հալածանքները, ինչ որ խոստովանողներն ու նահատակները:

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ՍՐԸԵՐ

Յին եւ Նոր Կտակարաններում կան բազմաթիվ բացառիկ դեմքեր, որոնք արժանի են նախատիալ լինելու մարդկանց համար: Սրանք միշտ գնահատվել են քրիստոնյաների կողմից: Չորրորդ դարից սկսած, սակայն, սրանցից առանձնանում է մի խումբ, որոնք անցնում են սրբերի կարգը:

Նոր Կտակարանից առանձնանում են առաջալները, նահատակները եւ Յովիաննես Մկրտիչը: Յիմնական չափանիշը նահատակությունն էր: Գրեթե բոլոր առաջալները նահատակվել են, Յովիաննես Մկրտիչը նույնապես: Առանձնանում է հատկապես Ստեփանոս Նախավկան:

Յին Կտակարանից առանձնանում են նահապետներն ու մարգարենները այն հատուկ դերի համար, որ գործել են նրանք Աստվածային տնտեսության ծրագրի իրագործման համար, ինչպես նաեւ այն պայքարների համար, որ կատարել են նրանք Աստվածային կամքը կատարելու համար:

Պաղեստինում հատկապես, այդ շրջանում մեծ հարգանք եւ պաշտամունք է առաջանում Ս. Գրիգոր անձնավորությունների նկատմամբ, որոնց կյանքը կապված է այդ երկորի հետ: Ըստ Եվսեբիոս Կեսարացու, Պաղեստինում այդ ժամանակ ցույց էին տրվում Աբրահամի, Ահարոնի, Ռեբեկայի, Ռաքելի եւ այլոց գերեզմանները:

Ս. Գրական դեմքերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Աստվածածինը, որը Առաքելական շրջանից իսկ հատուկ գնահատանքի էր արժանացել քրիստոնյաների կողմից: Չորրորդ դարից սկսած սակայն, հատկապես իինգերորդ դարում, այդ հարգանքը հասնում է իր զագարնակետին՝ Աստվածածինի համարելով սրբերի գլուխություն:

Առաջին դարի քրիստոնյաները եւ նահատակները թաղվում էին հեթանոսների հետ միասին նույն գերեզմանոցում: Ժամանակի ընթացքում, սակայն, առաջանում են քրիստոնեական գերեզմանոցներ: Յավանաբար դա առաջացել է երկրորդ դարի կեսերից, եւ դրանք կոչվել են ոչ թե գերեզմաններ, այլ նոնարաններ կամ հանգստարաններ: Այս նոնարանները համարվում էին սուրբ վայրեր: Այստեղ է սկսում սկզբնավորվել քրիստոնեական արվեստը: Այդ նոնարանները դաշտում են նահատակների նկատմամբ եկեղեցու ցուցաբերած հարգանքի արտահայտության կենտրոնները: Եղել են նեպքեր, երբ հեթանոսները քանդել են նահատակների գերեզմանները եւ ոչնչացրել նրանց նշխարները, որպեսզի քրիստոնյաները դրանք պաշտամունքի վայր չդարձնեն:

Մարտիրոսների գերեզմանները ժամանակի ընթացքում դաշտում են հավատացյալների համար կրոնական արտահայտությունների, միջոցառումների, հավաքատեղիներ: Նահատակության օրը ամեն տարի տոնվում էր համայնքի կողմից իբրև «ծննդյան» տոն: Նահատակի գերեզմանը հանդիսանում է նրա նկատմամբ ցուցաբերվող պատվի, պաշտամունքի կենտրոնը, ինչպես նաեւ նրա «ծննդյան» տոնա-

Կատարության վայրը: Նահատակի հիշատակը տոնվում էր այն դեպքում միայն, երբ հայտնի էր նրա գերեզմանը:

Երրորդ դարում սկսում են երեւան զալ նահատակների գերեզմանների վրա նատուրալամբարաններ: Երբ չորրորդ դարում քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն, սկսեցին կառուցվել մեծ տաճարներ մարտիրոսների գերեզմանների վրա: Նախկին փորդիկ մատուռները չեն ոչնչացվում, այլ օգտագործվում էին այնպես, որ դրանք պահպանվեին կամ եկեղեցին կառուցվում էին այնպես, որ նախկին մատուռը մնում էր խորանի տակ (օրինակ. Ս. Շոխիսիմե, Ս. Գայանե, Ս. Մ. Մաշտոց), կամ եկեղեցին արտաքին պատով կցվում էր մատուռի պատին (օրինակ՝ Արատես), կամ էլ մատուռը մնում էր եկեղեցու կենտրոնում:

Նահատակի հիշատակի տոնակատարությունը նման չէր սգո արարողության, այլ ճիշտ հակառակ՝ ուրախության տոնակատարություն էր: Քրիստոնյաները, սպիտակ զգեստներ հագած, ուրախությանը էին մասնակցում այդ հավաքույթներին, որովհետեւ հավատում էին, որ հավատքի համար նահատակները արժանացել են անմահության:

Դայ Եկեղեցու սրբերը քաժանվում են իհմնականում երկու կարգի՝ տոնելի սրբեր, որոնց հիշատակը տոնվում է Եկեղեցում ժամերգությունների եւ Ս. Պատարագի ժամանակ, եւ հիշատակելի սրբեր, որոնց կյանքի եւ մահվան պատմությունները ընթերցվում են Յայսմավուրքից՝ երեկոյան ժամերգությունից հետո:

Դայ Եկեղեցու տոնելի սրբերին կարելի է բաժանել հետեւյալ խմբերի.

ա. Աստվածաշնչական սրբեր (նահապետներ, մարգարեներ, առաջալներ, հրեշտակներ եւ այլն):

բ. Ընդհանուր Եկեղեցու սրբեր: Մինչեւ Ե դարի կեսը Անտիոքի, Կիլիկիայի, Միջագետքի, Երուսաղեմի, Կիպրոսի, Ալեքսանդրիայի, Եթովպիայի, Կեսարիայի, Սերաստիայի, Յոռմի, Կարթագենի, Պարսկաստանի եւ այլ Եկեղեցիների կողմից ընդհանրական ճանաչում գտած շուրջ 300 նահատակներ, ճգնավորներ, Եկեղեցու վարդապետներ:

գ. Դայ Եկեղեցու սրբեր (կամ հայազգի սրբեր): Նահատակներ, ի մասնավորի. Սանդուխտ կույս (Ա դար), Շոխիսիմյան եւ Գայանյան կույսեր (+300), Գրիգորիս եպիսկոպոս (+337), Վաչեանք (+338), Վարդաննար (+451), Ղետոնյանը (+454), Շուշանիկ (+460), Ալոնյանը (+449), Վահան Գողբրնացի (+737), Սահակ եւ Յամազասպ Արծրունիներ (+785), Սահակ եւ Յովսեփ Կարմեցիներ (+808) եւ այլն:

Նշանավոր քարոզիչներ եւ հովվապետներ, ինչպես օրինակ. Ս. Գրիգոր Լուսավորիչ (+325), Արիստակես (+333), Վոթանես (+341), Յուսիկ (+347), Ներսես Մեծ (+373) կաթողիկոսներ, Դամիել (Դ դար), Խաղ (Դ դար) եպիսկոպոսներ եւ այլն:

ճգնավորներ եւ վաճականներ, ինչպես օրինակ. Անտոն եւ Կրոնիդես (Դ դար), Թաթուլ, Վարոս, Թումաս (Ե դարի վերջ) 7 խոտաճարակներ (Ե դար), Գրիգոր Նարեկացի (+1003) եւ այլն:

Եկեղեցու վարդապետներ, որոնք իրենց գիտական վաստակով պաշտպանել են Դայ Եկեղեցու ուղղափառությունը: Դիշենք Սահակին (+437) եւ Մեսրոպին (+438), քարգմանիչ վարդապետներին Եղիշեհին, Մովսեսին, Դավիթին եւ այլն (Ե դար), Յովհան Օձնեցուն (+728), Ներսես Շնորհալուն (+1173), Յովհան Որոտնեցուն (+1387), Գրիգոր Տաթեւացուն (+1409) եւ այլն:

Դայ Եկեղեցում սրբերի հրաշկման առանձին կարգ գոյություն չի ունեցել: Իհմնականում նրանք սրբերի կարգն են անցել կաթողիկոսական կարգադրություններով եւ համաժողովրդական ճանաչումով: Այսպես. Ս. Գրիգոր Նարեկացին իր կենդանության օրով իսկ սուրբ էր հրաշկվել ժողովրդի կողմից: Կերպին կաթողիկոսը, որ սրբերի դասը ճոխացրեց, Սիմեոն Երեւանցին էր (1763և1780): Նա նրանց կարգը դասեց Դայ Եկեղեցու վարդապետներ Յովհան Որոտնեցուն եւ Գրիգոր Տաթեւացուն, ինչպես նաև Դայ Եկեղեցու բարեկարգիչ Մովսես Գ Տաթեւացի կաթողիկոսին (1629և1632):

Գ. ՊԱՐՈՑ ՕՐԵՐ

Յայ Եկեղեցական օրացույցում տարվա օրերի շուրջ կեսը պահը է: Պահոց օրերին արգելվում է ուտել կաքնեղեն, մսեղեն, գործածել խմիչք:

Պահոց օրերն են.

ա. Բոլոր չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը. չորեքշաբթիները ի հիշատակ Քրիստոսի չարչարանքի, ուրբաթ օրերը՝ Քրիստոսի թաղման:

բ. Մեծ Պահը՝ Զատկից առաջ, որ տեսում է 7 շաբաթ: Կոչվում է նաև Քառասնորդական Պահը:

գ. Մեծ տոներից առաջ շաբաթապահեր և

Դրանք են

Ծննդյան (դեկտ. 30 և հունվ. 5),

Առաջավորաց պահը (Մեծ պահից 3 շաբաթ առաջ, Երկուշաբթիից մինչեւ ուրբաթ օրը),

Լուսավորչի պահը (Գյուտ Նշխարաց Ս. Լուսավորչի տոնից առաջ, Երկուշաբթիից մինչեւ ուրբաթ օրը), Վարդապահի,

Վերափոխումն Ս. Աստվածածնիի,

Խաչվերացի,

Վարագա Ս. Խաչի,

Յիսուսակաց եւ

Ս. Յակոբի տոներին նախորդող շաբաթապահերը:

ՏՈՄԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր քրիստոնյա Եկեղեցիները իրենց տոնական օրերը հաստատել են արեգակնային ամիսների ամսաթվերի վրա. այսինքն, միեւնույն տոնը ամեն տարի կատարվում է հաստատուն ամսաթվին, անկախ թե ինչ օր կլինի: Միայն Զատիկն է եւ նրա հետ կապված տերունական հիշատակները, որ կատարվում են ըստ շաբաթվա օրերի:

Յայ Եկեղեցին իր տոների համար հիմք է ընդունել ո՞չ թե ամսաթվը, այլ շաբաթվա յոթնօրյա սիստեմը: Անշարժ ամսաթվով կատարվում են միայն Քրիստոսի Ծննդյան եւ Մկրտության (հունվարի 6), Անվանակոչության (հունվարի 13), Տեառնընդառաջի (փետրվարի 14), Աստվածածնի Ավետման (ապրիլի 7), Ծննդյան (սեպտեմբերի 8), Ընծայման (նոյեմբերի 21) եւ Աննայից հոդության (դեկտեմբերի 9) տոները:

Յայ Եկեղեցու տոնարական կարգի հիմնական կետը Զատկի օրն է, որ 35 օրվա շարժականություն ունի եւ տատանվում է մարտ 25-ից ապրիլի 25-ի միջևեւ: Զատկից բացի կան չորս ելակետային տոներ՝ Վերափոխումը, որ լինում է օգոստոսի 12-ի 18-ին հանդիպող կիրակի օրը, Խաչվերացը՝ սեպտեմբերի 11-ի 17-ին հանդիպող կիրակի օրը, Յիսուսակաց պահը՝ բարեկենդանը՝ նոյեմբերի 15-ի 21-ին հանդիպող կիրակի օրը եւ Աստվածայիսության (Քրիստոսի Ծննդյան եւ Մկրտության) տոնը՝ հունվարի 6-ին: Այս հինգ տոների համապատասխան տեղադրվում են մյուս տոնական կամ պահոց օրերը, ըստ շաբաթվա յոթնօրյա դրության:

Կիրակի օրերը բացառապես նվիրված են տերունի տոներին, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը պահոց օրեր են, սրբոց հիշատակները տոնվում են Երկուշաբթի, Երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին, եթե տերունի կամ պահոց օրեր չեն: Սրբերի հիշատակի համար հատկացված է 120 օր:

Տերունի տոներից 5-ը կոչվում են Տաղավար տոներ, այսինքն ամենանշանավոր տոներն են: Դրանք են Աստվածայիսությունը (Քրիստոսի Ծննդյան եւ Մկրտությունը), Զատիկը (Քրիստոսի Յարությունը), Վարդապահը (Քրիստոսի այլակերպությունը), Վերափոխումն Ս. Աստվածածնի եւ Խաչվերացը:

Տաղավարներին հաջորդող Երկուշաբթի օրերը մերժելոց հիշատակի օրեր են: